# Մասիս ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

35ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 09 (1709) ՇԱԲԱԹ, ՄԱՐՏ 14, 2015
VOLUME 35, NO. 09 (1709) SATURDAY, MARCH 14, 2015

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## Արժանավայել Շուքով Նշուեցաւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան 60-ամեակը



«Նոր Սերունդի» վարչութեան անդամները ու պատուի արժանացողները

Անցեալ Շաբաթ, Մարտ 7ին, 2015, Կլենտէյլի «Տրիմ Փալաս» շքեղ հանդիսասրահին մէջ հանդիսաւոր կերպով նշուեցաւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան հիմնադրութեան 60 ամեակը եւ հարաւային Գալիֆորնիոյ ՆՍՄՄ-ի մասնաճիւղի կազմաւորման 35րդ տարեդարձը:

Մշակութասէր խուռներամ բազմութեան մէջ կը նշմարուէր ներկայութիւնը Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արք. Տէրտէրեանի, նախկին առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ արք. Յովսէփեանի, ՍԴՀԿ կեդրոնական վարչութեան եւ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի անդամներուն, ինչպէս նաեւ գաղութիս մշակութային կազմակերպութիւններու եւ հայ մամուլի ներկայացուցիչներուն:

Այս բարեբաստիկ տարեդարձին առիթով շնորհաւորական գրութիւն մը յղած էր Հայաստանի Հանրապետութեան Մշակոյթի Նախարարուհի Յասմիկ Պօղոսեան:

60 ամեակին առիթով լոյս տեսած գրքոյկ-յայտագրի մէջ համառօտ տեղեկութիւններ տպուած էին ՆՍՄՄ-ի անցնող 35 տարիներու Գալիֆորնիոյ շրջանի գործու-նէութեան եւ յետագայ ազգօգուտ ծրագիրներու մասին: Առաւել խօսուն էր անցնող տասնամեակներու գործունէութեան ամփոփ տեսա-ժապաւէնի ցուցադրութիւնը:

Հանդիսավար Արուս Գրիգորեանի ողջոյնի խօսքէն ետք սեղաններու օրհնութիւնը կատարեց Գերշ. Վաչէ արք. Սրբազան:

Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Յովնան արք. իր ելոյթին մէջ բարձր գնահատեց Նոր Սերունդ Մշակութային Միութեան ազգա-նուէր ծառայութիւնը հայապահ-պանման նուիրական առաքելութեան մէջ: Առանձնապէս դրուատեց վարչութեան անցեալի եւ ներկայի պատասխանատուները մաղթելով յարատեւութիւն եւ նորանոր յաջողութիւններ: Առ այդ յատուկ յուշանուէրով եւ պաշտօնա-կան գրութեամբ պատուեց ատենապետ Յարութ Տէր

Շար.ը էջ 5

## Հայաստանի Մէջ Արդարադատութեան Նկատմամբ Վստահութիւն Չկայ

Եւրոպայի Խորհուրդի մարդու իրաւունքներու յանձնակատար Նիլս Մուժնիէկս Մարտ 11-ին զեկոյց մը հրապարակած է, ամփոփելով Հոկտեմբերին Հայաստան կատարած իր այցելութեան արդիւնքները: Այս առիթով «Ազատութիւն» ռատիոկայանը հարցազրոյց մը ունեցած Նիլս Մուժնիէկս հետ, պարզաբանումներ ստանալու համար իր հրապարակած զեկոյցի մասին:

Յանձնակատարը ըսած է թէ զեկոյցին մէջ իրենք յատկապէս անդրադարձած են ընտրովի արդարադատութեան ընկալման հարցին վրայ. «Մենք բազմաթիւ ահազանգեր ենք ստացել այն մասին, որ ընդդիմադիրները զգում են, որ արդարադատութիւնը հաւասարապէս չի կիրառւում, եւ նրանք, ովքեր քննադատում են իշխանութիւններին, երկար պատժաչափերի են դատապարտւում, իսկ նրանք, ովքեր սերտ յարաբերութիւնների մէջ են իշխանութիւնների հետ, կա՛մ հեշտութեամբ ազատ են արձակւում, կա՛մ թեթեւ պատժաչափեր են ստանում: Սա մի հարց է, որով իշխանութիւնները պէտք է զբաղուեն: Սա երկարաժամկէտ լուծում է պահանջում. Հայաստանում արդարադատութեան համակարգի նկատմամբ վստահութիւն չկայ հասարակութեան բոլոր շերտերում: Ահա թէ ինչու արդարադատութեան համակարգում պէտք է բարձրացուի պրոֆեսիոնալիզմը եւ դատաւորների անկախութիւնը, ինչի մասին ես գրել եմ զեկոյցում: Եւ սա կարող է օգնել յաղթահարելու ընտրովի արդարադատութեան ընկալումը»:

Մարտ 1-ի դէպքերու մասին խօսելով յանձնակատարը ըսած է,- «Ես կարծում եմ, որ այստեղ գործ ունենք մարդու իրաւունքների շատ լուրջ խախտումների հետ, մասնաւորապէս՝ կեանքի իրաւունքի խախտում, վատ վերաբերմունքի արգելք: Այս դէպքերից 7 տարի է անցել, դա չափազանց երկար ժամանակ է ցանկացած հետաքննութեան համար: Ես իմ այցելութեան ժամանակ այս հարցը բարձրացրել եմ իմ մի շարք զրուցակիցների հետ հանդիպումներում եւ պարզել եմ, որ դեռ տարբեր տեսակի քննչական գործողութիւններ են կատարւում: Կարծում եմ սա լուրջ խնդիրը, որը պէտք է լուծել: Այլապէս մենք գործ կունենանք անպատժելիութեան իրավիճակի հետ, մարդու իրաւունքների լուրջ խախտումների պարագայում, ինչը կարող է միայն խրախուսել ապագայում նմանօրինակ խախտումները: Իմ դիրքորոշումը յստակ է՝ այս գործով հետաքննութիւնը պէտք է արագօրէն աւարտին հասց-

Շար.ը էջ 4

## Ապրիլ 24, 2016-ին Երեւանի մէջ Ճորճ Գլունի Պիտի Յանձնէ «Աուրորա» Մրցանակը

Նիւ Եորքի մէջ յայտարարուեցաւ մարդասիրական նոր մրցանակի մը հաստատման մասին որ կը կրէ «Աուրորա» անունը եւ առաջին մրացանակի յանձնումը պիտի կատարուի Ապրիլ 24, 2016-ին Երեւանի մէջ, ձեռամբ աշխարհահռչակ դերասան եւ մարդկային իրաւունքներու պաշտպան Ճորճ Գլունի:

Մրցանակը հաստատուած է խումբ մը հայերու կողմէ հիմնուած «100 Կեանքեր» եւ Ճորճ Գլունի գլխաւորած «Ոչ Մեր Ժամանակ» կազմակերպութիւններուն միջեւ:

«Աուրորա» (Aurora Prize for Awakening Humanity) պիտի շնորհուի անոնց, որոնք իրենց սեփական կեանքը վտանգի ենթարկելով հնարաւորութիւն տուած են մարդոց գոյատեւելու եւ հասնելու բարեկեցութեան:

«Աուրորա» անուանումը ընտրուած է ի պատիւ հայուհի Աուրորա Մարտիկանեանին, որ մանուկ հասակին դարձած է հայոց ցեղասպանութեան ընթացքին գործուած բարբարոսութիւններուն ականատեսը եւ կորսնցուցած է իր հայրն ու եղբայրները: Հրաշքով փրկուելէ ետք ան կրցած է իր մէջը գտնել ուժ եւ իր կեանքը նուիրած է մարդասիրական օգնութիւն ցուցաբերելու եւ Հայոց ցեղասպանութեան մասին բարձրաձայնելու գործին՝ նկարահանուելով «Յօշոտուած Հայաստան» (1919) ժապաւէնի գլխաւոր դերին մէջ:




Ռուբէն Վարդանեան եւ Ճորճ Գլունի

«100 Կեանքեր» (100 LIVES) նախաձեռնութեան գաղափարը կը պատկանի յայտնի գործարարներ եւ բարերարներ Ռուբէն Վարդանեանին, Նուպար Աֆէյեանին եւ Նիւ Եորքի «Գարնիկի» հիմնադրամի նախագահ Վարդան Գրեգորեանին:

«Բազում հայերու կեանքեր

Շար.ը էջ 4

## Գարսըն Մերժեց Աթաթուրքի Արձանի Զետեղումը Քաղաքէն Ներս

Լոս Անճելըսի մօտ գտնուող Գարսըն քաղաքի քաղաքապետական խորհուրդը իր անցեալ շաբթուայ նիստի ընթացքին միաձայնութեամբ մերժեց, քաղաքի Միջազգային Յուշարձաններու պարտէզին մէջ Թուրքիոյ հանրապետութեան հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի արձանը զետեղելու առաջարկը:

Քաղաքապետական խորհուրդի հերթական նիստի ընթացքին դահլիճը լեցուած էր հայերով եւ թուրքերով ու անցաւ փոթորկոտ եւ աղմկոտ մթնոլորտի մէջ: Հայկական կողմէ խօսք առնելու համար արձանագրուած էին 298 հոգիներ, իսկ թրքական կողմէ 101:

Սակայն, ժամանակի անբաւարարութեան պատճառաւ իւրաքանչիւր կողմէն խօսք իրաւունք տրուեցաւ վեց հոգիներու, որոնք իրենց թեր ու դէմ կարծիքները տուին Աթաթուրքի արձանի նպատակայարմարութեան մասին:

Նիստի ընթացքին կարդացուեցաւ Քալիֆորնիոյ Նահանգային Խորհրդարանի Հինգ անդամներու կողմէ ստորագրուած նամակը, իրենց անհամաձայնութիւնը յայտնելով արձանի զետեղման դէմ:առաջարկի:

Քննարկումներու աւարտին Գարսըն քաղաքի Քաղաքապետական Խորհուրդը միաձայնութեամբ մերժեց առաջարկը:

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Յովիկ Աբրահամեանը հետ կվերադարձնի Ծառուկեանին

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

Փետրուարի 12-ի ՀՀԿ խորհրդի «պատմական» նիստում Սերժ Սարգսեանի ելոյթի ընթացքում հասարակութեանը զարմացրել էր Յովիկ Աբրահամեանի պահուածքը, երբ նա «բամփում» էր իր խնամի Գագիկ Ծառուկեանին: Հասարակութեանը զարմացրել էր, որ Յովիկ Աբրահամեանը չփորձեց կանգնել իր խնամու կողքին, պաշտպանել նրան ՀՀԿ գրոհներից, այլ միացաւ գրոհներին:

Բայց զարմանալին դա չէր իհարկէ: Ի վերջոյ, Աբրահամեանը յայտարարել էր, որ խնամիութիւնն ու քաղաքականութիւնը տարբեր բաներ են: Վերջին հաշուով, խնամիութիւնը չէ միջոցը, միջոցը հայկական «էլիտայի» համար քաղաքականութիւնն է, եւ Յովիկ Աբրահամեանն իր պահուածքով ծառայել է թէ իրեն, թէ Ծառուկեանին: Ի վերջոյ, Աբրահամեանը ոչինչ չէր շահի, եթէ փորձէր պաշտպանել խնամուն: Կը կորցնէին երկուսն էլ: Մինչդեռ այժմ մէկն իհարկէ հեռացել է քաղաքականութիւնից, բայց փոխարէնը գոնէ մնացել է միւսը՝ որը կարող է հանդիսանալ համատեղ խնամիութեան քաղաքական տանիքը:

Այնպէս որ, հասարակութիւնն իզուր է փորձում մտնել խնամիների մատի եւ մատանու արանքը:

Յովիկ Աբրահամեանի պահուածքը փոքր ինչ հարցեր է առաջացնում այլ տեսանկիւնից: Նա որեւէ կերպ չփորձեց առարկել Սերժ Սարգսեանին, ով յայտարարում է, թէ՝ քաղաքականութեան մէջ ինտելեկտից զուրկ մարդը չունի տեղ: Այլ կերպ ասած, Սերժ Սարգսեանը յայտարարում էր, որ քաղաքականութեան համար խելք է պէտք: Մինչդեռ, յայտնի է, որ Յովիկ Աբրահամեանը հակառակ կարծիքի է եւ իր իսկ փորձին յղում անելով յայտարարում էր, թէ խելք բիզնեսում է պէտք, իսկ քաղաքականութեան մէջ խելք պէտք չէ:

Բայց, Սերժ Սարգսեանի ելոյթին նա չհակառակուեց: Մնում է անորոշ՝ Յովիկ Աբրահամեանը փոխե՞լ է իր կարծիքը, թէ վարչապետն ունի այլ մտադրութիւններ եւ լռել է մարտավարական նկատառումներից ելնելով: Յովիկ Աբրահամեանը հաւակնում է Սերժ Սարգսեանից ժառանգել իշխանութիւնը, դառնալ իշխանութեան թիւ մէկ դէմքը: Նա այդ գործում որոշակի յաջողութիւն արդէն ունի՝ կարողացել է լուսանցք մղել Լեւոն Տէր-Պետրոսեանին եւ Ռոբերտ Քոչարեանին:

Յովիկ Աբրահամեանը ձեռք է բերել նաեւ ԲՀԿ-ն, որը կ՚օգտագործի իր քաղաքական ծրագրերն առաջ մղելու եւ իշխանութեան մէջ առկայ միւս հաւակնորդներին էլ լուսանցք մղելու համար: Կը ստացուի, թէ ոչ, այլ հարց է, առաւել եւս, որ ժամանակն Աբրահամեանի օգտին չի աշխատում՝ տնտեսական ցուցանիշները աղէտալիօրէն նուազում են, միջազգային կոնիւնկտուրան էլ չի փոխւում:

Բայց, Յովիկ Աբրահամեանն առայժմ չի յանձնւում: Իսկ քանի դեռ չի յանձնւում, նա չի բարձրաձայնի քաղաքականութեան եւ խելքի մասին, որովհետեւ եթէ նրան յաջողուի ստանձնել իշխանութեան ղեկը, ապա այդ ղեկը հանրութիւնից պաշտպանելու հարցում որեւէ բան չի կարող Աբրահամեանին օգնել աւելի, քան Գագիկ Ծառուկեանի վերադարձը մեծ քաղաքականութիւն:

«ԼՐԱԳԻՐ»

# Համաշխարհային պատժամիջոցներն ու հայաստանեան ընտրութիւնները

*ՄՈՒՍԱ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ*

Ռուսաստանի էկոնոմիկայի նախարարը յայտարարել է, որ 2016 թուականին հնարաւոր կը լինի յաղթահարել ճգնաժամն ու անցնել աճի: Սա, ըստ էութեան, այն երկամեայ ժամկէտն է, որն անցեալ տարեվերջին ազդարարել էր Պուտինն իր մեծ ասուլիսի ընթացքում: Ռուսաստանի նախանշած այս ժամկէտն իհարկէ կախուած չէ Ռուսաստանից: Դա կախուած է տնտեսական պատժամիջոցներից, որոնք կիրառում է Արեւմուտքը:

Ինչքան էլ Մոսկուան ակնկալում է յարմարուել պատժամիջոցներին, ակնյայտ է, որ դրանք ունեն աճելու տեղ, եւ եթէ Արեւմուտքը շարունակի եւ խստացնի, ապա Ռուսաստանը ռեսուրսներ չունի յարմարուելու եւ աճի ռեժիմի անցնելու: Ռուսաստանին այդ դէպքում սպառնում է ԽՍՀՄ ճակատագիրը, որը տնտեսութիւնը պահում էր, այսպէս ասած, ռեզերվների հաշուին, եւ ամբողջ հարցը հանգում է նրան, թէ ռեզերւները որքան կը ձգեն:

Այս ամէնը Հայաստանի համար է չափազանց կարեւոր, որովհետեւ Հայաստանն այսօր աւելի ու աւելի ուժգին կերպով է զգում ռուսական տնտեսութեան ռեցեսիայի հետեւանքները: Ըստ որում, ակնյայտ է, որ Հայաստանն այդ հետեւանքների դէմ պայքարի զուտ իրավիճակային լուծումներ է փնտռում, որպէսզի խուսափի համակարգային լուծումների դիմելուց: Սակայն նաեւ կասկածից վեր է, որ ազդեցութիւնն այնքան ծանր է լինելու, որ վաղ թէ ուշ հարկ է լինելու դիմել համակարգային ելքերի որոնմանը, քանի որ իրավիճակային լուծումներն ի զօրու չեն ելք հանդիսանալ տնտեսական անկման դէմ:

Հայաստանի արտարժութային ռեզերւները հասել են պատմական նուազագոյնին, դրանք երբեք այսքան ցածր մակարդակի վրայ չեն եղել, քան այսօր: Մինչդեռ Հայաստանի ֆինանսատնտեսական կայունութիւնը կախուած է հենց այս ռեզերւներից: Իսկ ռեզերւներն ապահովում է Արեւմուտքը: Այսինքն՝ ըստ էութեան, Հայաստանն աննախադէպ տնտեսական կախուածութեան մէջ է յայտնուել Արեւմուտքից: Իսկ սա էլ իր հերթին ստեղծել է նոր քաղաքական իրավիճակ, որը զուգորդուելով հայաստանեան ներքաղաքական դաշտում նոր իրավիճակի հետ, ըստ էութեան, ձեւաւորել է արտաքին ու ներքին իրավիճակի իւրօրինակ նոր սիմբիոզ:

Այդ խառնուրդն ըստ էութեան դեռ չի դրսեւորուել իր ազդեցութեան ողջ ծաւալով, եւ շատ հաւանական է, որ առաջիկայում նման դրսեւորումների ականատես չենք էլ դառնայ: Ամենայն հաւանականութեամբ, ամէն ինչ տանում է դէպի 2017-18 թուականների ընտրական փուլ, եւ այս փուլին ոչ միայն Հայաստանի ներքին ուժերն են պատրաստւում, այլ պատրաստւում են նաեւ Հայաստանով շահագրգռուած արտաքին քաղաքական կեդրոնները: Այս տեսանկիւնից է նաեւ, որ ՌԴ հանդէպ արեւմտեան պատժամիջոցների խնդիրը Հայաստանի համար դառնում է շատ էական եւ հարց է առաջ բերում, թէ արդեօք այդ պատժամիջոցները կը շարունակուե՞ն մինչեւ 2017 թուական: Շարունակուելու դէպքում ակնյայտ է, որ պատժամիջոցների քաղաքականութիւնը իր ազդեցութիւնն է թողնելու Հայաստանում ընտրական հերթական փուլի արդիւնքների վրայ: Ըստ էութեան, մենք արդէն իսկ ականատես ենք լինում շղկապուած մի գործընթացի, եւ ժամանակին զուգընթաց այդ դրսեւորումներն առաւել ընդգծուած կարող են դառնալ, եթէ պահպանուի Արեւմուտք-Ռուսաստան ներկայիս յարաբերութիւնների կամ դիմակայութեան տրամաբանութիւնը:

«ԺԱՄԱՆԱԿ»

# ԲՀԿ-ն զրկւում է նաեւ ընտրակեղծարարներից

*ՄԻՔԱՅԷԼ ՍԱՀԱԿԵԱՆ*

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնից արտահոսքը շարունակւում է: Ազգային ժողովի «Բարգաւաճ Հայաստան» խմբակցութեան պատգամաւորներից բացի՝ վերջին օրերին իրար յետեւից կուսակցութիւնից դուրս գալու դիմումներ են ներկայացնում նաեւ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները՝ քաղաքապետեր, գիւղապետեր: Այսօր էլ տեղեկութիւններ տարածուեցին, որ կուսակցութիւնից դուրս գալու դիմումներ են ներկայացրել Աբովեանի մարզի թւով 26 գիւղական համայնքների ղեկավարներ, աւելի վաղ ԲՀԿ-ից հեռացել էին Նոր Հաճընի, Բիւրեղաւանի, Սիսիանի եւ մի շարք այլ քաղաքների քաղաքապետեր, այսօր յայտնի դարձաւ, որ նրանց հետեւել է նաեւ Եղեգնաձորի քաղաքապետ Դաւիթ Յարութիւնեանը:

Արտահոսքը ԲՀԿ-ից, ըստ ամենայնի, դեռ կը շարունակուի: Կուսակցութիւնից հեռացողներն իրենց դիմումներում չեն յստակեցնում, թէ ինչպէս են շարունակելու իրենց «քաղաքական գործունէութիւնը» կուսակցութիւնից հեռանալուց յետոյ: Բացառութեամբ, իհարկէ, պատգամաւորների, ովքեր յայտարարում են, թէ «օրէնսդիր աշխատանքը» շարունակելու են անկախ պատգամաւորի կարգավիճակում: Սակայն պակաս ուշագրաւ չէ քաղաքապետերի ու գիւղապետերի պարագան: Վերջիններս, ինչպէս յայտնի է, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներ լինելուց բացի կամ դրանից առաջ, ունեն մի կարեւորագոյն ֆունկցիա՝ ընտրութիւնների ժամանակ «համապատասխան» կուսակցութեան կամ թեկնածուի յաղթանակի ապահովումը՝ բոլոր հնարաւոր մեթոդներով, ընտրակեղծարարութիւնը, մի խօսքով: Նրանք տարիներ շարունակ զբաղուել են դրանով ԲՀԿ-ի հովանու ներքոյ ու, առաջին հերթին՝ ԲՀԿ-ի համար: Իշխանութեան թողտուութեամբ, բնականաբար:

Հիմա, երբ ԲՀԿ-ն՝ որպէս այդպիսին, այլեւս գոյութիւն չունի, անհասկանալի վիճակում է յայտնուել նաեւ ԲՀԿ-ական ընտրակեղծարարների «խաւը»: Ընդ որում, եթէ ԲՀԿ-ն այլեւս անհրաժեշտ չէ իշխանութեանը, ապա նոյնը չի կարելի ասել քաղաքապետերի ու գիւղապետերի մասին: Առջեւում, ըստ ամենայնի՝ յաջորդ տարի, տեղի է ունենալու սահմանադրական փոփոխութիւնների հանրաքուէն, որի ժամանակ իշխանութիւնը կրկին զգալու է ընտրակեղծարարների կարիքը: Դրան յաջորդելու են համապետական ընտրութիւններ, որոնց ընթացքում նրանք եւս ամենապահանջուած «գործիչներն» են դառնալու իշխանութեան համար: Այնպէս որ, այս օրերին հեռանալով ԲՀԿ-ից՝ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներն այդպիսով շտապում են ի լուր իշխանութեանը յայտարարել, որ պատրաստ են շարունակել իրենց «սուրբ գործը» ՀՀԿ-ի համար: Հետաքրքիր է՝ առաջիկայում նոյն կերպ կը վարուե՞ն նաեւ ԲՀԿ-ական ու ԲՀԿ-ամերձ քրէական հեղինակութիւնները, որոնք քաղաքապետերի ու գիւղապետերի հետ ուս-ուսի տուած ապահովել են ԲՀԿ-ի յաղթանակը խորհրդարանական նախորդ ընտրութիւններում:

«168 ԺԱՄ»

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# Կենտրոնական Բանկը Առայժմ Որեւէ Ծրագիր Չունի ԵՏՄ Միասնական Արժոյթին Անցնելու

Հայաստանի կենտրոնական բանկը այս պահի դրութեամբ որեւէ ծրագիր չունի ու ԵՏՄ շրջանակում որեւէ բանակցութիւն չի վարել՝ միութենական արժոյթին անցնելու նպատակով:

«Եւրասիական Տնտեսական Միութեան անդամակցութեան շրջանակներում ստորագրուած փաստաթղթերում նման փաստաթուղթ, անգամ դրա նպատակայարմարութեան, ուսումնասիրութեան, հեռանկարների վերաբերեալ, գոյութիւն չունի», - «Ազատութեան» հետ զրոյցում ասաց ԿԲ խորհրդի անդամ Արմենակ Դարբինեանը: - «Նոյնը կարող եմ ասել ծրագրերի մասին, որ այս պահի դրութեամբ նման ծրագրեր, նման քննարկումներ կենտրոնական բանկում չկան», - յաւելեց նա:

Անցած տարի «Մոսկովսկի կոմսոմոլեց» պարբերականը, յղում կատարելով Եւրասիական տնտեսական յանձնաժողովում իր աղբիւրին, գրել էր, որ Եւրասիական Տնտեսական Միութիւնն ունենալու է իր միասնական արժոյթը, եւ այն կոչուելու է «Ալթըն»՝ ընդգծելով, որ հարցը ոչ պաշտօնապէս արդէն իսկ հաւանութեան է արժանացել Ռուսաստանի, Ղազախստանի ու Բելառուսի նախագահների կողմից:

«Որեւէ բանակցութիւն, որեւէ պաշտօնական քննարկում այդ ուղղութեամբ չի եղել: Եւ, աւեմ աւելին, ԵՏՄ շրջանակներում քննարկուել է ֆինանսական շուկայի միասնական կարգաւորողի ձեւաւորման խնդիրը, որը պէտք է տեղի ունենայ 2025 թուից յետոյ: Այդ ընթացքում պէտք է ներդաշնակեցուեն ազգային օրէնսդրութիւնները, կարգաւորումները, եւ նոր դրանից յետոյ այդ հարցը մտնելու է օրակարգ», - նշեց Դարբինեանը՝ կարծիք յայտնելով, որ տարիներ են հարկաւոր, որպէսզի ԵՏՄ-ում միասնական արժոյթի անցնելու պայմաններ ստեղծուեն:

# Բազմաֆորմատ Հանդիպումներ Ոչ Իշխանական Դաշտում

Ոչ իշխանական կուսակցութիւնները ԲՀԿ-ի հետ կատարուածքց ու ընդդիմադիր դաշտի ամայացումից յետոյ բազմաֆորմատ հանդիպումների մէջ են: Այս մասին յայտնեց «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցութեան նախագահ Պետրոս Մակէեանը, նա չցանկացաւ «գաղտնազերծել» թէ ով ում հետ հանդիպում, բայց չհերքեց իրենց մասնակցութեան փաստը.«Բացայայտ կամ հրապարակային ներկայացնելու կարիքը չկայ, որովհետեւ բազմապիսի անհատական, խմբակային հանդիպումներ կան: Փորձում ենք դեռեւս հասկանալ, թէ քաղաքական ուժերն ինչպէս են գնահատում ստեղծուած իրավիճակը, դա կարելի է ամենօրեայ աշխատանք համարել եւ հրապարակելու անհրաժեշտութիւն չտեսնել»:

Միակ բացայայտ ֆորմատն այս պահին ԱԻՄ նախագահ Պարոյր Հայրիկեանի նախաձեռնութիւնն է , որն ընդունել են մի շարք հակաԵՏՄ-ական ուժեր, որոնց թւում Մակէեանի կուսակցութիւնը: ԱԻՄ գրասենեակում կայացել է հերթական հանդիպումը:

Սկզբում հանդիպումներին մասնակցում էին վեց ուժեր, որից յետոյ խորհրդակցութիւնների այդ ձեւաչափը լքեց Հիմնադիր Խորհրդարանը: Իսկ վերջին հանդիպմանը մասնակցել են միայն Պահպանողական եւ «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցութեան ներկայացուցիչները: Միւս երկուսը՝ «Ժառանգութիւնն» ու ՀՀՇ-ն, հանդիպումներին չեն մասնակցել, Մակէեանի փոխանցմամբ՝ յարգելի պատճառներով:

Այս ուժերն այժմ աշխատում են մի յայտարարութեան փաստաթղթի վրայ, որի բովանդակութիւնը յոյժ գաղտնի են պահում, բայց տեղեկութիւններ կան, որ դրանով մտադիր են յայտնել համատեղ դիրքորոշում երկրում տիրող իրավիճակի եւ դրանից դուրս գալու ելքերի վերաբերեալ:

# «Ժողովուրդ». Արցախում Ընտրութիւնները Թէժ Են Լինելու

«Ժողովուրդ» թերթը գրում է որ, ԼՂՀ-ում մեկնարկել է խորհրդարանական ընտրութիւններում թեկնածուների առաջադրման գործընթացը:

Թեկնածուների առաջադրման ժամկէտն աւարտւում է Մարտի 19-ին, ժամը 18.00-ին: Ընտրութիւնների ժամանակացոյցի համաձայն՝ նախընտրական քարոզարշաւը պէտք է սկսուի Ապրիլի 1-ից: «Ժողովուրդ»-ի տեղեկութիւններով՝ ԼՂՀ ԱԺ ընտրութիւններում մտադիր են առաջադրուել «Ազատ հայրենիք» կուսակցութիւնը, որը ղեկավարում է ԼՂՀ վարչապետ Արայիկ Յարութիւնեանը, ինչպէս նաեւ ՀՅԴ-ն, որն այսօր ղեկավարում է Արմէն Սարգսեանը: Ընտրութիւններին կը մասնակցի նաեւ Արցախի ժողովրդավարական կուսակցութիւնը, որի ղեկավարը ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլեանն է:

«Ժողովուրդ»-ի տեղեկութիւններով՝ հնարաւոր է ընտրութիւններին մասնակցի նաեւ «Շարժում 88» ընդդիմադիր կուսակցութիւնը:

Արցախում շրջանառուող լուրերի համաձայն՝ հնարաւոր է՝ ընդդիմութիւնն առաջնորդի ԼՂՀ պաշտպանութեան նախկին նախարար Սամուէլ Բաբաեանը: Միւս տարբերակով էլ Սամուէլ Բաբաեանը նման ցանկութիւն չունի, պարզապէս ինչ-որ մարդիկ փորձում են չահարկել նրա անունը:

ԼՂՀ ԱԺ փոխխօսնակ Արթուր Թովմասեանը, որը ժամանակին Սամուէլ Բաբաեանի ղեկավարած «Դաշինք» կուսակցութեան անդամ է եղել, «Ժողովուրդ»-ի հետ զրոյցում ասաց, որ ԼՂՀ պաշտպանութեան նախկին նախարարի վերադարձի վերաբերեալ որեւէ տեղեկութիւն չունի:

Նշենք, որ առաջիկայ 10 օրերին պարզ կը դառնայ, թէ Բաբաեանի վերադարձի մասին լուրերը որքանով են համապատասխանում իրականութեանը:

Յիշեցնենք, որ ԼՂՀ ԱԺ ընտրութիւնները պէտք է տեղի ունենան Մայիսի 3-ին»:

# Սերժ Սարգսեանը Մասնակցել է «Քարֆուրի» Բացման



Սերժ Սարգսեան »Քարֆուրի« բացման առթիւ կը շրջի շուկայի տարբեր մասերը

«Երեւան Մոլ»-ում, վերջապէս, պաշտօնապէս բացուեց երկար սպասուած ֆրանսիական Carrefour առեւտրային ցանցի հայաստանեան հիպերմարկետը: ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեանը ներկայ է գտնուել Carrefour-ի պաշտօնական բացման արարողութեանը: Հիպերմարկետի տարածքի նախնական վարձակալութեան պայմանագիրը Carrefour-ի եւ «Երեւան Մոլ»-ի միջեւ ստորագրուել էր դեռեւս 2014թ. Մայիսի 13-ին, Սերժ Սարգսեանի եւ Ֆրանսիայի Հանրապետութեան Նախագահ Ֆրանսուա Օլանդի ներկայութեամբ՝ Ֆրանսիայի Նախագահի Հայաստան պետական այցի շրջանակներում:

Երեւանի քաղաքապետ Տարօն Մարգարեանի եւ Carrefour-ի հայաստանեան գրասենեակի տնօրէն Քրիստիան դը Նալի կողմից Մարտի 11-ին հիպերմարկետի բացումից յետոյ, Սերժ Սարգսեանը եւ բացման կապակցութեամբ հրաւիրուած հիւրերը շրջել են Carrefour-ի տարածքում, ծանօթացել առաջարկուող ապրանքատեսականուն, գնային քաղաքականութեանը, ծառայութիւնների որակին:

Carrefour-ի հայաստանեան գրասենեակի տնօրէն Քրիստիան դը Նալի խօսքով՝ հիպերմարկետում կը գերակշռի հայկական արտադրանքը, ներմուծուած ապրանքները կը լինեն 5 տոկոսից աւելի քիչ: Քրիստիան դը Նալը վստահեցրել է, որ Carrefour-ում ապրանքների գները ցածր կը լինեն:

Քրիստիան Դը Նալը ընդգծել է, որ հիպերմարկետի խնդիրն է՝ ցանկացած ապրանք՝ տեղական, թէ ներկրուած, պէտք է աւելի էժան գնով վաճառուի, քան մրցակից սուպերմարկետներում:

Աւելի վաղ Դը Նալն գիւղնախարար Սերգօ Կարապետեանին տեղեկացրել էր, որ Carrefour-ը նախապատուութիւնը տալու է տեղական արտադրանքին, իսկ գիւղմթերքի 95%-ը ձեռք է բերուելու անմիջապէս հայ արտադրողներից: Քրիստիան Դը Նալը պատրաստակամութիւն էր յայտնել Հայաստան գործուղել համապատասխան մասնագէտների՝ խորհրդատուութիւն առաջարկելու վերամշակող ճիւղի տարբեր ոլորտների ընկերութիւններին՝ արտադրանքի որակի եւ տեսականու հարցում:

Carrefour-ն աշխարհում մեծութեամբ երկրորդ մանրածախ ցանցն է՝ Wal-Mart-ից յետոյ: Carrefour Group-ի բաժնետոմսերի խոշորագոյն փաթեթը պատկանում է յայտնի ֆրանսիացի գործարար Բերնար Առնոյին: Ընկերութիւնն աշխարհի 32 երկրում ունի մօտ 15 հազար հիպերմարկետ, սուպերմարկետ եւ փոքր խանութ: 2012-ին Carrefour-ը տարածաշրջանում բացեց իր առաջին հիպերմարկետը՝ Թբիլիսիում: 2009-ին Carrefour-ը երկու սուպերմարկետ էր բացել նաեւ Ռուսաստանում (Կրասնոդարում եւ Մոսկուայում), սակայն արդէն յաջորդ տարի դուրս է եկել ռուսական շուկայից: 2012-ին Carrefour-ը յայտարարեց նաեւ յունական շուկայից դուրս գալու մասին:

# «Հայկական Ժամանակ». Ծառուկեանը Սերժ Սարգսեանին Երդուել Է Փակել ԲՀԿ-Ն

«Հայկական ժամանակ» թերթը գրում է. «Քաղաքական շրջանակներում սկսեցին լուրեր շրջել թէ ԲՀԿ նախկին նախագահ Գագիկ Ծառուկեանը Սերժ Սարգսեանին երդուել է, որ փակելու է «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը: Ըստ այդ լուրերի՝ շատերը նրա հրահանգով են լքում ԲՀԿ-ն:

ԲՀԿ-ից դուրս եկաւ հերթական պատգամաւորը՝ Արայիկ Աղաբաբեանը: ԲՀԿ նորընտիր նախագահ Նաիրա Զոհրաբեանը մեր թղթակցին յայտնել է, որ առաւօտեան, ժամը 8.30-ին խօսել է Արայիկ Աղաբաբեանի հետ, ով վստահեցրել է, որ չի լքելու կուսակցութիւնը: «Նա ինձ տղամարդավարի վստահեցրեց, որ մնալու է կուսակցութիւնում, եւ նրա վստահեցումից մէկ ժամ անց ես կայքերում կարդում եմ, որ նա դուրս է գալու կուսակցութիւնից: Տղամարդկութեան մասին մեկնաբանութիւնները թողնում եմ ձեզ»,- ասել է Նաիրա Զոհրաբեանը:

ԲՀԿ-ից դուրս գալու դիմում են գրել նաեւ Երեւանի աւագանու ԲՀԿ խմբակցութեան երկու անդամներ Արմէն Սահակեանը եւ Գրիգորի Գրիգորեանը: Մեր տեղեկութիւններով, առաջիկայում էլի աւագանիներ կը լքեն ԲՀԿ-ն: ԲՀԿ-ն լքողները դա անում են Գագիկ Ծառուկեանի հրահանգով, ով շարունակում է նաեւ կուսակցութեան կառոյցներից հետ պահանջել գրասենեակային գոյքը»:

# ԼՈՒՐԵՐ

## Տեսանիւթ Հայերի Ցեղասպանութեան Մէջ Գերմանիայի Մասնակցութեան Մասին



«3 Սաթ» գերմանալեզու արբանեակային հեռուստատեսութեան եթերում «Մշակոյթի ժամ» հաղորդաշարի հեղինակ Կորնելիուս Եանցենը Մարտի 4-ին ներկայացրել է «Գերմանացիները եւ հայերի ցեղասպանութիւնը» խորագրով տեսանիւթ:

Հեղինակը փաստում է, որ Գերմանիայի արտաքին գերատեսչութեան քաղաքական արխիւում հարիւրաւոր փաստաթղթեր կան, որոնք վկայում են հայ ժողովրդի համակարգուած սպանդի, ինչպէս նաեւ՝ այդ գործում Կայսերական Գերմանիայի դերի մասին:

Եանցենի պատրաստած հաղորդմանը մասնակցում էին «Լեփսիուսի Տուն» հետազօտական կենտրոնի գիտական ղեկավար դոկ. Ռոլֆ Հոսֆելդը եւ «Tageszeitung» օրաթերթի Թուրքիայի թղթակից Եուրգեն Գոթշլիխը: Վերջինս համոզուած է, որ Հայոց ցեղասպանութեան իրագործման գործում Կայսերական Գերմանիայի քաղաքական դերն աւելին է, քան իբրեւ դիտորդ:

Թեմայի շուրջ Գոթշլիխը ուսումնասիրել է թուրքական եւ գերմանական արխիւները, ի վերջոյ եկել այն եզրահանգման, որ Գերմանիան «ակտիւ քաղաքական աջակցութիւն է ցուցաբերել Ցեղասպանութեան իրագործմանը՝ սեփական պատերազմական նպատակներն իրագործելու համար»:

Հարցազրոյցի ընթացքում նա, մասնաւորապէս, շեշտում է, որ Օսմանեան զինուած ուժերի գլխաւոր շտաբի պետ, գերմանացի գեներալ Ֆրիդրիխ Բրոնզարթ ֆոն Շելենդորֆը ոճրի անմիջական մասնակից է, ոչ թէ՝ դիտորդ:

Իսկ, ըստ Ռոլֆ Հոսֆելդի՝ իրադարձութիւնները զարգացել են ռազմական մտածողութեան համատեքստում, պատերազմն ամէն գնով յաղթելու ցանկութեանն իրականացմանն ուղղուած մեթոդների ներքոյ: Նա հաւատացած է, որ Գերմանիան պարզապէս հանդուրժեց հայերի ցեղասպանութիւնը:

Հոսֆելդը քննադատում է հարցի շուրջ Գերմանիայի ներկայիս կեցուածքն ու նրան մեղադրում «ամնեզիայի« մէջ:

Տեսանիւթի հեղինակը հաղորդման ընթացքում պատմական տուեալներ է առաջ քաշում՝ յղում անելով այն ժամանակուայ դիւանագիտական նամակագրութիւններին, որոնք ցոյց են տալիս, որ Գերմանիան տեղեկացուած էր դաշնակցի զարհուրելի գործողութիւնների մասին:

Կ. Եանցենը, հաղորդման մասին պատմելով, ներկայացնում է, թէ ինչ բարդ ընթացակարգեր է անցել Թուրքիայում թեմայի վերաբերեալ նկարահանումների թոյլտուութիւն ստանալու դիմումն ուղղակի ընդունելու հարցում ինչը մինչ օրս անպատասխան է մնացել:

Եանցենը նշել է նաեւ, որ Գերմանիայի ԱԳՆ-ն ու Մշակոյթի հարցերով պետնախարարը թեմայի շուրջ մեկնաբանութիւն տալու պատրաստակամութիւն չեն յայտնել:

## Արդարադատութեան Նկատմամբ Վստահութիւն

Շարունակուածէջ 1-էն

ուի, մեղաւորները պատասխանատուութեան կանչուեն, զոհերի հարազատների պահանջները բաւարարուեն»:

Զեկոյցին մէջ Պրն. Մուժնիէկս անդրադարձած է նաեւ Շանթ Յարութիւնեանի գաւակի հարցին: «Գործ ունէինք երեխայի հետ, ով 14 տարեկան էր, երբ խնդրոյ առարկայ իրադարձութիւնները տեղի ունեցան: Եւ ես ցնցուած էի, երբ իմացայ, որ նրան երկարաժամկէտ ազատազրկում է սպառնում: Այլ կերպ ասած՝ նրան չէին վերաբերւում որպէս երեխայի: Եւ, առ հասարակ, հարկաւոր է բարեփոխել անչափահասներին առնչուող օրէնսդրութիւնը, այն դարձնել երեխաների համար աւելի նպաստաւոր: Իմ այցելութիւնից յետոյ ես գոհունակութեամբ իմացայ, որ Յարութիւնեանի որդին պայմանական ազատազրկման է դատապարտուել եւ ազատ է արձակուել, նրան ազատազրկում չի սպառնում: Շատ ուրախ եմ լսել դա: Կարծում եմ դա լաւ, իմաստուն եւ մարդկային վճիռ էր: Սակայն կուզանայի իմանալ, թէ քանի՞ նմանօրինակ դէպքեր կան, երբ անչափահասներին երկար ազատազրկում է սպառնում: Կարծում եմ, երբ գործ ունենք այդօրինակ երիտասարդների հետ, նրանց կալանաւորելը սխալ է: Սա սոցիալական խնդիր է, նրանք աջակցութեան կարիք ունեն, սոցիալական միջամտութեան կարիք»:

## «Հայոց Ցեղասպանութեան Ժառանգութիւնը 100 Տարի Անց» խորհրդաժողով Հաագայում




Հաագայի մէջ տեղի ունեցած խորհրդաժողովի մասնակիցները

Մարտի 6-ից 7-ը Հաագայի Գլոբալ արդարադատութեան ինստիտուտում տեղի ունեցաւ «Հայոց ցեղասպանութեան ժառանգութիւնը 100 տարի անց» խորագրով խորհրդաժողովը, որը կազմակերպուել էր Նիդերլանդների «ՆԻՈԴ» պատերազմի, Հոլոքոստի ու ցեղասպանութեան ուսումնասիրութիւնների ինստիտուտի, Հարաւային Կալիֆորնիայի համալսարանի Հայկական ուսումնասիրութիւնների ինստիտուտի եւ «Հարիւրամեակի նախագիծ» հիմնադրամի կողմից:

Խորհրդաժողովը մեկնարկեց մարտի 5-ին Հաագայի «Մարդկութեան տուն» թանգարանում կայացած քննարկումով, որի ժամանակ ցուցադրուեց «Տատիկիս դաջուածքները» ֆիլմը: Հիմնական ելոյթով հանդէս եկաւ դոկտոր Ռոնալդ Սիւնին, իսկ իր դիտարկումներով՝ դոկտոր Ուգիւր Ումիտ Ունգորը:

Մարտի 6-7-ի խորհրդաժողովի ընթացքում ելոյթ ունեցան յայտնի գիտականներ ու ուսումնասիրողներ, ովքեր տարբեր դիտակէտերից քննարկեցին Հայոց ցեղասպանութեան հետեւանքներն ու այն դասերը, որոնք պէտք է քաղել ցեղասպանութիւնների կան-

## Հայ Առաքելական Եկեղեցու Իրաքի Թեմի Առաջնորդի Նամակը Իշխան Չարլզին

Այն բանից յետոյ, երբ լուրեր տարածուեցին, որ Ուէլսի արքայազն Չարլզը ներկայ է լինելու Գալիպոլիի ճակատամարտի զոհերի յիշատակին նուիրուած միջոցառմանը, որը Թուրքիայի կառավարութիւնը որոշել է նշել Ապրիլի 24-ին, միջազգային հանրութեան ուշադրութիւնը շեղելու համար Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցի միջոցառումներից, Հայ Առաքելական Եկեղեցու Իրաքի թեմի առաջնորդ՝ Աւագ արքեպիսկոպոս Ասատուրեան նամակով դիմել է արքայազնին, յիշեցնելով նրան Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցի մասին:

«Ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցին, Հայաստանի Հանրապետութիւնը պատրաստւում է կազմակերպել միջոցառում: Նոյն օրը Թուրքիայի Հանրապետութիւնը որոշել է յիշել Գալիպոլիի ճակատամարտը, որի ժամանակ Օսմանեան կայսրութիւնը կռուել է Անգլիայի եւ նրա դաշնակիցների դէմ: Անկասկած, այդ արարողութիւնը որեւէ առնչութիւն չունի Գալիպոլիի ճակատամարտի հետ: Դրա նպատակն է ոչնչացնել ազգի մասին յիշողութիւնը,- գրել է Ասատուրեանը:

Արքեպիսկոպոսը գրել է, որ արքայազնին որոշել է նամակ գրել, երբ իմացել է, որ Մեծ Բրիտանիայի արքայազնը հրաժարուել է մասնակցել Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցի միջոցառումներին, իսկ Գալիպոլիի արարողութեանը սպասւում է բրիտանական կառավարութեան մասնակցութիւնը՝ բարձրագոյն մակարդակով:

«Այն, ինչ զանգուածաբար իրականացուել է հայերի Ցեղասպանութեան ժամանակ՝ կտրելով մարդկանց կոկորդներն ու ողջ-ողջ այրելով մարդկանց, այսօր իրականացնում է «իսլամական պետութիւն»,- գրել է արքեպիսկոպոսը, արքայազնին առաջարկելով պատկերացնել, թէ ինչ կը լինէր, եթէ 100 տարի անց Մեծ Բրիտանիայի վարչապետը ներկայ գտնուէր այսօրուայ «իսլամական պետութեան» իրաւայաջորդի կազմակերպած միջոցառմանը, եւ յոյս յայտնելով, որ Մեծ Բրիտանիան կը գործի իր արժէքներին համապատասխան:

## Երեւանի մէջ Ճորճ Գլունի Պիտի Յանձնէ

Շարունակուածէջ 1-էն

փրկած մարդոց գթասրտու- թիւնը, մեծահոգութիւնը, կամքն ու անձնազոհութիւնը մեզ կը պարտաւորեցնեն բարձրաձայնել այդ պատմութիւններուն մասին: Ժամանակը հասած է լոյս սփռելու բացառիկ ճակատագրերու եւ կենսագրութիւններու վրայ՝ ընդունելով անոնց պատգամները եւ յայտնելով մեր երախտագիտութիւնը՝ կատարուած գործին համար»,- ըսած է 100 LIVES-ի համահիմնադիր Ռուբէն Վարդանեան:

Գնահատելով եւ խոնարհելով վերապրածներու եւ զանոնք փրկողներուն առջեւ՝ 100 LIVES նախաձեռնութիւնը սահմանած է «Աւրորա» մրցանակը՝ մերօրեայ անձնազոհ մարդոց աջակցելու եւ խրախուսելու նպատակով:

Ամէնամեայ մրցանակը կ'ենթադրէ 1 միլիոն ԱՄՆ տոլարի նուիրաբերում: Մրցանակին տիրացողը իր ստացած գումարը պիտի յատկացնէ այն կազմակերպութեան, որ զինք ոգեշնչած է մարդասիրական քայլեր կատարելու:

Մրցանակի ընտրող յանձնախումբի անդամներն են Օսքարակիր դերասան Ճորճ Գլունին, Խաղաղութեան Նոպէլեան մրցանակակիրներ Էլի Ուիզելը ու Օսքար Արիասը, ՄԱԿ-ի Մարդու իրաւունքներու հարցերով նախկին գերագոյն յանձնակա-տար Մերի Ռոպինսընը, Ցեղասպանութեան հարցերով ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղարի խորհրդական Կարըլթ Էվանսը, մարդու իրաւունքներու ճանչցուած պաշտպան Հինա Ճիլանին եւ Նիւ Եորքի «Գարնիկի» հիմնադրամի նախագահ Վարդան Գրեգորեանը:

# ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆ ԽԱՉՄԵՐՈՒԿ ԱՆՈՒԱՆԵԼ Ի ՅԻՇԱՏԱԿ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ

*ԱՄՆ Լոս Անճելոս քաղաքի խորհրդի անդամ Միթչ Օ՛Ֆարելը միջնորդութիւն է ներկայացրել Հոլիվուտ Պուլուվար-Ուեսթըրն Աւենիու փողոցների խաչմերուկը «Հայոց ցեղասպանութեան յիշատակի հրապարակ» անուանելու մասին: Ինչպէս հաղորդում է «Արմենպրես»-ը՝ վկայակոչելով* MasisPost*-ը, միջնորդութիւնը նաեւ առաջարկում է Լոս Անճելոսի տրանսպորտի վարչութեանը յիշատակի մշտական նշաններ տեղադրել խաչմերուկի շրջակայքում: Փաստաթուղթը քաղաքային խորհրդում քուէարկութեան կը դրուի առաջիկայ շաբաթներին:*




*«Լոս Անճելոս քաղաքը միշտ եղել է հայկական ամենամեծ համայնքներից մէկի տունը: Հայկական մեծ սփիւռքը գլխաւորապէս կապուած է 1915 թուականին Օսմանեան Թուրքիայի կազմակերպած Հայոց ցեղասպանութեան հետ, որին 1.5 մլն հայ է զոհ գնացել, եւ շատ աւելի շատերը բռնի տեղահանուել են իրենց պապենական հայրենիքից: Հարիւր տարի անց Օսմանեան կայսրութեան իրաւայաջորդ Թուրքիայի կառավարութիւնը շարունակում է չճանաչել այս պատմական փաստը: Լոս Անճելոսի հայկական համայնքը անդադրում աշխատում է Թուրքիայի եւ աշխարհի միւս կառավարութիւնների կողմից ճանաչման հասնելու համար՝ որպէսզի բարձրացնի իրազեկուածութիւնը մարդկութեան դէմ իրագործուած այս հրեշաւոր հանցագործութիւնների մասին»,- ասւում է միջնորդութեան մէջ:*

# Արժանավայել Շուքով Նշուեցաւ

*Շարունակուածէջ 13-էն*

*Դաւիթեանը:*

*Գործադրուեցաւ գեղարուեստական պատշաճ յայտագիր մը, մասնակցութեամբ Նոր Սերունդ պարախումբի մենակատարողներուն:*

*«Պատուոյ Գիր»եր շնորհուեցան միութեան հիմնադիրներուն եւ կարգ մը վաստակաշատ նուիրեալ անդամներուն:*

*ՆՍՄՄ-ի աւելի քան տասնեակ մը տարիներու երախտաւոր ատենապետ Յարութ Տէր Դաւիթեան պարգեւատրուեցաւ ՍԴՀԿ-Վարիչ Մարմնի «Պատուոյ Գիր»-յուշատախտակով ձեռամբ ատենապետ Գաբրիէլ Մոլոյեանի, առ ի գնահատանք հայ մշակոյթին եւ հայ լրագրութեան իր մատուցած շնորհակալ ծառայութեանց եւ նուիրումին:*



*Ընթրիքի սպասարկութենէն առաջ ելոյթ ունեցաւ ՆՍՄՄ-ի ժրաջան ատենապետ Յարութ Տէր Դաւիթեան: Ան շեշտը դրաւ միութեան ազգապահպանման առաքելութեան առջեւ ցցուած մարտահրաւէրներուն եւ այդ առնչութեամբ առնուելիք գործնական միջոցառումներուն մասին, որոնցմէ է ՆՍՄՄ-ի նոր նախաձեռնութիւնը՝ «Հայ Ինքնութեան Զատագովման Ծրագիր»ը:*

*Այս առթիւ տեղի ունեցան պարգեւատրութիւններ: ՆՍՄՄ-ի*

*60 ամեակի կարկանդակի հատումէն ետք տօնախմբութիւնը շարունակուեցաւ երաժշտութեամբ ու խանդավառ երգ ու պարով:*

*Արդարեւ յիշատակելի երեկոյ մըն էր, որուն մասին պիտի անդրադառնանք յառաջիկային:*

# ՀՌՈՄՈՒՄ ԲԱՑՈՒԵՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆՆ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆԸ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ




*Մարտի 5-ին Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի կապակցութեամբ Հռոմի հեղինակաւոր Վիտտորիանօ իտալական վերածննդի թանգարանային համալիրի կենտրոնական ցուցասրահում կայացաւ «Հայաստան. Տապանի ժողովուրդ» խորագիրը կրող հայկական քաղաքակրթութեանը, Հայոց ցեղասպանութեանն ու Իտալիայում հայերի ներկայութեանը նուիրուած ցուցահանդէսի պաշտօնական բացումը: Ցուցահանդէսը կազմակերպել են ՀՀ մշակոյթի նախարարութիւնն ու Իտալիայում եւ Սուրբ Աթոռում Հայաստանի դեսպանութիւնները՝ Մխիթարեան Միաբանութեան եւ Իտալիայի Հայերի միութեան հետ համագործակցութեամբ:*

*Նախքան ցուցահանդէսի բացումը կայացաւ մամուլի ասուլիս իտալական զանգուածային լրատուամիջոցների ներկայացուցիչների համար, որին ներկայ էին 50-ից աւելի իտալական ԶԼՄ-ների ներկայացուցիչներ: Ասուլիսում խօսքով հանդէս եկան Իտալիայում Հայաստանի դեսպան Սարգիս Ղազարեանը, Իտալիայի նախագահի մշակութային արժէքների պահպանման հարցերով խորհրդական պրոֆ. Լուի Գոդարը (*Prof. Louis Godart*), Իտալիայում յայտնի հայազգի դերասան Պաոլօ Քեսիսօղլուն (*Paolo Kessisoglu*):*

*Դեսպան Սարգիս Ղազարեանն իր խօսքում նշեց, որ ցուցահանդէսի նպատակն է իտալական հասարակութեանը ներկայացնել հայ ժողովրդի 3 հազարամեայ պատմութեան ու քաղաքակրթութեան դրուագները, այդ թւում՝ Հայոց ցեղասպանութիւնը, որը դեսպանի բնորոշմամբ «մահափորձ էր հայ ժողովրդի ու հայկական քաղաքակրթութեան դէմ»:*

*Նա ընդգծեց, որ այդ «մահափորձին» հայ ժողովուրդը պատասխանեց իր վերածնունդով եւ դրա մարմնաւորումը հանդիսացող անկախ Հայաստանի Հանրապետութեան կերտմամբ: Դեսպան Սարգիս Ղազարեանն անդրադարձաւ Իտալիայում հայկական համայնքների 2000-ամեայ պատմութեանը եւ Իտալիայի զարգացման գործում նրանց ներդրմանը: Նա նաեւ յիշատակեց իտալացի մի շարք ականաւոր քաղաքական-հասարակական գործիչների, նրանց թւում Իտալիայի վարչապետ Լուիջի Լուցատիին (*Luigi Luzzatti*), ֆինանսների նախարար Ֆիլիպպօ Մեդային (*Filippo Meda*), Անտոնիօ Գրամշիին (*Antonio Gramsci*), Տրապիզոնում Իտալիայի հիւպատոս Ջիակոմօ Գոռինիին (*Giacomo Gorrini*), ովքեր 1915-16թթ. դատապարտել են Օսմանեան կայսրութեան կողմից հայ ժողովրդի հանդէպ կատարուող ոճրագործութիւնը:*

*Պրոֆեսոր Լուի Գոդարը կարեւորեց ցուցահանդէսի կազմակերպումը՝ հայկական քաղաքակրթութիւնը համարելով եւրոպական քաղաքակրթութեան բաղկացուցիչ մաս: Նա նշեց, որ ինչպէս անցեալում Հայաստանը քրիստոնէութեան պատնէշն էր Եւրոպայի համար, այսօր էլ պատնէշ է հանդիսանում արեւմտեան քաղաքակրթութեան համար իսլամական ծայրայեղականութեան դէմ: Նա Հայոց ցեղասպանութիւնը բնութագրեց որպէս «մարդկութեան պատմութեան ամենամութ էջերից մէկը» եւ դրուատանքով խօսեց հայ ժողովրդի տոկունութեան մասին՝ նշելով, որ իր հանդէպ գործած բռնութիւններին հայ ժողովուրդը պատասխանել է հզօր մշակոյթով ու քաղաքակրթութեամբ եւ պատմեց հայ երկու կանանց կողմից ցեղասպանութեան օրերին Մշոյ Ճառընտիր աւետարանի փրկութեան պատմութիւնը: Իր հերթին, Պաոլօ Քեսիսօղլուն խօսեց հայ ինքնութեան իր անձնական փնտռտուքի մասին եւ հատուածներ ընթերցեց հայ ժողովրդի մասին Ուիլիըմ Սարոյեանի խօսքերից:*

*Երեկոյեան ՀՀ մշակոյթի նախարար Յասմիկ Պօղոսյանի, Վիտտորիանօ համալիրի տնօրէն Ալեսանդրօ Նիկօզիայի, Հռոմի քաղաքապետ Ինյացիօ Մարինոյի, Իտալիայում ՀՀ դեսպան Սարգիս Ղազարեանի եւ Սուրբ Աթոռում Հայաստանի դեսպան Միքայէլ Մինասեանի ներկայութեամբ կայացաւ «Հայաստան. Տապանի ժողովուրդ» ցուցահանդէսի պաշտօնական բացման արարողութիւնը: Նրան ներկայ էին հարիւրաւոր այցելուներ, որոնց թւում էին Իտալիայի քաղաքական-հասարակական գործիչներ, սենատորներ ու պատգամաւորներ, դիւանագիտական կորպուսի եւ հայ համայնքի ներկայացուցիչներ: Ողջոյնի խօսքով հանդէս եկան ՀՀ մշակոյթի նախարար Յասմիկ Պօղոսեանը, Վիտտորիանօ համալիրի տնօրէն Ալեսանդրօ Նիկօզիան, Իտալիայում ՀՀ դեսպան Սարգիս Ղազարեանը:*

*Եօթ առանձին բաժինների ցուցանմուշներն ու տեսանիւթերը ներկայացնում են Հայաստանում քրիստոնէութեան ընդունումը, խաչի պատկերագրութիւնը, հայ գրերի ստեղծումը, ձեռագիր մատեաններ, հայկական ճարտարապետութիւնն ու արուեստը, հայ-իտալական դարաւոր յարաբերութիւններն ու Իտալիայում հայկական մշակոյթի ու պատմութեան հարուստ ներկայութիւնը, ինչպէս նաեւ առանձին սրահով Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ փաստագրական նիւթեր:*

*Ցուցահանդէսը գործելու է մինչեւ Մայիսի 3-ը: Այն լայնօրէն լուսաբանւում է իտալական զանգուածային լրատուամիջոցների՝ հանրային հեռուստատեսութեան եւ պարբերական մամուլի կողմից:*

# ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՍԴՀԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՈԵՄ-Ի ԱՏԵՆԱՊԵՏ ԸՆԿԵՐ ՌՈՄԱՆ ԾԱՏԻՆԵԱՆԻ ՀԵՏ

«Երիտասարդ Հայաստան»-ի հարցազրոյցը ՍԴՀԿ Հայաստանի Տխրունի Ուսանողական Երիտասարդական Միութեան (ՏՈԵՄ) ատենապետ՝ Ընկ. Ռոման Ծատինեանի հետ: Կուսակցութեան պատասխանատու մարմիններուն ընդգծուած քաղաքականութեան ծիրին մէջ կարեւոր եւ արժանի տեղ կը գրաւէ նորահաս երիտասարդութիւնը: Այս մօտեցումը ըմբռնումի ուժականութիւն ունի տրուած ըլլալով, որ ցանկացած կազմակերպութեան առողջ ապագայի հիմնական երաշխիքը՝ անոր գործունեայ, տինամիք եւ նուիրեալ երիտասարդութեան ամրացումն է:



- Ի՞նչ հանգրուանի առջեւ է այսօր ՍԴՀԿ Հայաստանի ՏՈԵՄ-ը: Կրնաք հակիրճ կերպով ներկայացնել ընդհանուր իրավիճակը:

*- Այսօր մենք բաւականին կայացած կառոյց ենք, մեր շարքերէն ներս ունինք բազմաթիւ գաղափարապէս հասուն երիտասարդներ, որոնք գիտեն թէ ինչի համար կը պայքարին եւ պատրաստ են մինչեւ վերջ երթալու այդ նպատակի իրագործման համար: Մենք՝ երիտասարդներս, ամէն շաբաթ կը կազմակերպենք հանդիպումներ, կ'իրականացնենք բազմաթիւ միջոցառումներ, որոնց կարեւորագոյններէն մէկը վերջերս ձեռնարկուած բողոքի երթն էր դէպի ԱԳՆ եւ ՄԱԿ-ի գրասենեակ, կապուած սահմանային միջադէպերուն եւ լարուածութեան հետ, որ խլեց եւ այսօր ալ կը շարունակէ խլել տասնեակ հայ զինուորներու կեանքը: Այսօր, մեծ հաշուով, մենք կը գտնուինք չյայտարարուած պատերազմի մէջ, որու վառ ապացոյցը կը հանդիսանան սահմանի վրայ ինկող բազում նահատակները եւ մեր կոչն այն էր, որ նշուած մար- միններն համապատասխան քայլեր ձեռնարկեն Ազրպէյճանի սանձարձակութիւնները վերացնելու համար:*

- Միշտ խօսուած է, որ մանաւանդ Հայաստանի մէջ երիտասարդական հատուածներուն մօտ կուսակցութիւններուն հանդէպ հետաքրքրութեան պակասը դարձած է երեւելի: Ինչի՞ն կը վերագրէք առկայ այդ երեւոյթը եւ ի՞նչ առաջադրանքներով կը պայքարիք օտարման երեւոյթին դէմ:

*- Կուսակցութիւններու հանդէպ երիտասարդներու հետաքրքրութեան պակասի պատճառներէն մէկն այն է, որ կուսակցութիւնները մեծաւ մասամբ կը հետապնդեն սեփական շահերը, անտեսելով հազարաւոր երիտասարդներու կարեւորագոյն խնդիրները: Իմ կարծիքով կուսակցութիւնը ոչ թէ պէտք է ծառայէ խումբ մը մարդոց, այլ՝ փորձէ հանրութեան առջեւ ծառացած բազմաթիւ խնդիրներու լուծման ուղիներ փնտռել:*

- ՍԴՀԿ-ը որպէս ազգային-աւանդական կուսակցութիւններու նախակարապետը, այսօր ի՞նչ առաջադրանքներով կը ներկայանայ Հայաստանի երիտասարդութեան: Արդեօ՞ք օրուան հանգամանքներուն յարմարուելու լուրջ խնդիրներ կան: Եթէ այո, ի՞նչ են անոնք:

*- Կուսակցութիւնը առաջին հերթին կը փորձէ սերտացնել կապերը երիտասարդներու հետ, քանի որ երտասարդները հասարակութեան ամենաաշխոյժ մասը կը կազմեն: Մեր կուսակցութիւնը հասարակութեան երիտասարդներուն կոչ կ'ուղղէ քաղաքականապէս աշխոյժ ըլլալ, տէր կանգնիլ իրենց իրաւունքներուն, եւ թոյլ չտան անոնց ոտնահարման: Մեր կուսակցութեան շարքերը օրէ օր կը համալրուին նորանոր անդամներով, որոնք իրենց ծրագիրներով եւ առաջարկներով նոր շունչ պիտի բերեն կուսակցութեան:*

- Երբեւիցէ մտածած էք Հայաստան-Սփիւռք երիտասարդական կապերու ամրացման մասին: Այդ առումով ի՞նչ են ձեր առաջարկութիւնները ընդհանրապէս:

*- Կուսակցութիւնը միշտ ապէս քայլեր ձեռնարկած է Հայաստան-Սփիւռք կապերու ամրապնդման համար եւ այդ աշխատանքի անբաժանելի մէկ մասը կը կազմէ Հայաստան-Սփիւռք երիտասարդական կապը: Մեր կուսակցութեան անդամ են բազմաթիւ սփիւռքահայ երիտասարդներ, որոնք Հայաստան հաստատուած են եւ մենք յաճախակի կը քննարկենք շարք մը ծրագիրներ եւ կը փորձենք ուղիներ գտնել Հայաստան-Սփիւռք երիտասարդական կապերու ամրապնդման համար:*

- Յաճախ խօսուած է Հայաստան-Սփիւռք գործիչներու եւ փորձի փոխանակման կարեւորութեան մասին: Երբեւիցէ մտածած է՞ք այս մասին:

*- Շատ կարեւոր կը համարեմ այդ փորձի փոխանակումը, եւ մենք Սփիւռքի մէջ ունինք բազմաթիւ քաղաքական գործիչներ, որոնց հետ ամէնամեայ այցելութիւններու ժամանակ կը կազմակերպուին համատեղ միջոցառումներ, ուր իւրաքանչիւրս հանդէս կու գանք մեր ծրագիրներով, եւ որու արդիւնքով ալ տեղի կ'ունենայ փորձի փոխանակում: Այս մէկը շատ կարեւոր հանգամանք կը համարեմ: Ընդհանրապէս իւրաքանչիւր ոլորտէ ներս փորձի փոխանակումը շատ կարեւոր է, քանի որ այդ միջոցաւ է, որ մենք կը տեսնենք դրական եւ բացասական կողմերը եւ տարբեր առաջարկներ կ'ընենք խնդիրներու լուծման համար, ընտրելով լաւագոյն տարբերակները եւ կեանքի կը կոչենք զանոնք:*

- Ի՞նչ են կարեւորագոյն հանգամանքները, որոնք պէտք է գործադրուին գաղափարանուէր երիտասարդներ պատրաստելու համար:

*- Իւրաքանչիւր ժողովուրդ եւ պետութիւն հզօր է իր գաղափարական հէնքով: Մեր պետութեան պարագային այդ գաղափարի բաղկացուցիչ մասերը պէտք է ըլլան Հայրենիքի հանդէպ նուիրուածութիւնը, արցախահայութեան անվտանգութեան ապահովման եւ Հայ Դատի արդարացի լուծման խնդիրները, ինչպէս նաեւ Հայաստան-Սփիւռք կապերու ամրապնդման միջոցաւ՝ մեր Հայրենիքի հզօրացման էական խնդիրը: Եւ որպէսզի երիտասարդները այդ խնդիրներու իրագործման մաս կազմեն, անոնք պէտք է գաղափարական պատրաստութիւն ստանան:*

- Արդեօ՞ք ժամանակավրէպ է «գաղափարական երիտասարդ» ընկալումը: Եթէ այո՛, ապա ի՞նչ պէտք է փոխել կուսակցութիւն-երիտասարդ կապը զօրացնելու եւ արդիւնաւորելու համար:

*- Ես ժամանակավրէպ չեմ համարեր «գաղափարական երիտասարդ» ընկալումը, քանի որ այսօրուան համաշխարհայնացման դարաշրջանին ազգային գաղափարէ զուրկ պետութիւնները շատ հեշտութեամբ կրնան իրենց դիմագիծը կորսնցնել եւ որպէս ազգային պետութիւն՝ այլեւս գոյութիւն չունենալ: Եւ ճիշդ այդ պատճառով է, որ մեր պետութիւնը իր քաղաքականութիւնը պէտք է մշակէ ամուր ազգային գաղափարական հիմերու վրայ, որպէսզի ունակ ըլլայ դիմագրաւելու պետութեան սպառնալիք հանդիսացող բազմաթիւ խնդիրները:*

- Հնչակեան շարքին համար շատ ուղենշային են Հայաստանի Տխրունիականներուն ընդհանուր գործելադաշտը եւ ապագայի ծրագիրները: Այս առումով պիտի ուզէինք յաւելեալ տեղեկութիւններ ստանալ Հայաստանի ՏՈԵՄ-ի ապագայի ծրագիրներուն մասին:

*- Մենք Տխրունիականներս կը փորձենք վերհանել այն խնդիրները, որոնք այսօր ծառացած են մեր ժողովուրդին եւ յատկապէս՝ երիտասարդներուն դիմաց: Այդ խնդիրներուն մաս կը կազմեն գործազրկութիւնը, աղքատութեան մակարդակի բարձրացումը, կաշառակերութիւնը, համալսարաններու ուսման վարձավճարներու թանկացումը, որ ի դէպ, մեծ հարուած եղաւ երիտասարդներու յառաջընթացին, քանի որ կան բազմաթիւ երիտասարդներ, որոնք բարձր կրթութիւն ստանալու ձգտում ունին, սակայն պետութեան կողմէ այս անհեռատես քայլը եւս մէկ անգամ անոնց զրկեց ուսման կատարելագործումը իրականացնելու յոյսէն:*

www.massisweekly.com
Updated every Friday



## ՊԱՏՄԱԲԱՆՆ ԱՆԿԱՐՈՂ Է ՑԱՒԸ ԹԱՐԳՄԱՆԵԼ

*ՍԱՄՈՒԷԼ ԿՈՍԵԱՆ*

Անքարայի հետ յարաբերութիւնները կարգաւորելու համար, ըստ Թուրքիայի արտգործնախարար Ջաւուշօղլուի. «Հայաստանը պէտք է դուրս գայ Լեռնային Ղարաբաղից»: Երկրի վարչապետ Դաւութօղլին էլ ձայնակցում է. «Եթէ հայերը թէկուզ մէկ շրջան յանձնէին, սահմանը կարող էր բացուել»: Իսկապէս, «կոշտը նստել, քարի դարդն է լացում» կամ «եղունգ ունես, սեփական գլուխդ քորիր»: Նոյն Դաւութօղլին յաւելել է, իբր. «Հայկական սփիւռքը մեզ համար թշնամի չէ, այն մերն է: Նրանք այստեղից են գնացել: Նրանք պէտք է ոչ թէ դրսում, այլ ներսում լինէին»: Թուրքերի տրամաբանութեանը հետեւելով, եթէ Թուրքիան համաձայնէր Արեւմտեան Հայաստանի գոնէ երկու վիլայէթ վերադարձնել, հայերն անպայմանօրէն կը վերադառնային եւ հնարաւոր է՝ ազատէին Թուրքերին իրենց անցեալին առերեսուելու մղձաւանջային պարտադրանքից: Սակայն ինչ-որ բան գիջելը կամ վերադարձնելը հակասում է Թուրքերի ուրացի հոգեբանութեանը: Այս պարագայում պարզապէս ֆանտազիայի ժանրից է Դաւութօղլիի յուզախառն խոստովանութիւնը, երբ չի ասւում, թէ ինչպէս է եղել, որ «իրենցը» յայտնուել է դրսում, եւ ինչու այդ մասին անգամ շչուկը դատապարտելի է այդ երկրում: Թուրքական Radikal պարբերականի Թուրք յօդուածագիրը նշում է, որ «ցեղասպանութեան հարցը Թուրքիայում տապուի է վերածուել, եւ այդ հարցի վերաբերեալ կառավարութեան յայտարարութիւնները ցեղասպանութեան ժխտումն ամրապնդելուց բացի, ոչինչ չեն անում»: Այսօր, շատերի կարծիքով, սառոյցը փոքր-ինչ շարժուել է, սակայն ակնյայտօրէն ոչ թէ ցեղասպանութեան փաստն ընդունելու, այլ 1915 թ. դէպքերը այլ շրջանակի մէջ տեսնելու եւ ներկայացնելու անառարկելի դիտաւորութեամբ, որի խորքային բովանդակութիւնը նոյն ժխտողականութիւնն է: Թէեւ Թուրքիայի խորհրդարանի խօսնակ Ջեմիլ Չիչեքի կարծիքով՝ «Թուրքիան պատրաստ է անցեալում տեղի ունեցած այդ ցաւերը բոլոր կողմերով ի ցոյց դնել եւ առերեսուել դրանց հետեւանքներին», անթաքոյց է, որ իրենց ժխտողական քաղաքականութեանը հաւատարիմ, փորձել եւ փորձելու են մշտական կասկածանքներով աղաւաղել դէպքերի իսկութիւնը, դրանց եղելութիւնը հաստատող «բացայայտումների» համար կարեւորելով գիտնականների եւ պատմաբանների աշխատանքը: Այս առումով նոյն Radikal-ը նշում է, որ իր վերջին ելոյթում նախագահ Էրդողանը կրկին խօսել է ցեղասպանութեան հարցը պատմաբաններին թողնելու անհրաժեշտութեան մասին: Պարբերականն այնուհետեւ յաւելել է. «Նրա՝ պետական արխիւները բացելու խօսքերն էլ ամենեւին համոզիչ չեն, քանի որ այս հողերում ապրածները գիտեն՝ ռազմական դատախազութեան արխիւից ցեղասպանութեան մասին մէկ փաստաթուղթ անգամ ստանալն անհնարին է»: Բացայայտ է, որ ցեղասպանութեան ժխտման խաղաթղթերի արժեզրկման պարագայում, Թուրքերի համար որպէս վերջին յոյս կամ յաղթաթուղթ է դառնում պատմաբանների յանձնաժողովի գոյութիւնը, անգամ իր խնդրահարոյց նշանակութեամբ, քանի որ մինչ այժմ 1915-ի բոլոր դէպքերի հաւաստիութիւնը պատմաբանները չէ, որ տեղեկացրել են: Եւ բոլոր այն երկրները, որոնք ճանաչել եւ դատապարտել են 20-րդ դարի առաջին ցեղասպանութիւնը, բնաւ էլ պատմաբանների «ուսումնասիրութիւնները» չեն շրջառել:

Թուրք ռեժիսորը Հայոց ցեղասպանութեան մասին իր ֆիլմը վերնագրել է «Սպի», չգիտակցելով ամենակարեւորը, որ Թուրքերը մինչեւ չապաշխարեն, չկարողանան իրենց անցեալի ճիշտ գնահատականը տալ, հայոց ցաւը բորբոք է մնալու, հայոց վէրքը չի հասցնելու սպիանալ: Ամենամեծ ցանկութեան դէպքում իսկ պատմաբաններն անկարող են այդ ցաւի թարգմանիչը լինել, ցաւի, որ հայերի համար ժառանգական է դարձել:

## ԵԿԷ՛Ք ՔՈՆԿՐԵՍԷՆ ՎՌՆՏԵՆՔ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԺԽՏՈՂ ՊԻԼ ՇՈՒՍԹԸՐԸ

*ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ*

Անցեալ շաբաթ տեղեկացուցի ամերիկահայ համայնքի յաջողութեան՝ Լոս Անճելըսի կողմէ 845 հազար տոլարի պայմանագիրը «Կեփհարթ Կրուփ»ին հետ չեղեալ համարելու մասին, Քոնկրէսին մէջ Հայոց Ցեղասպանութեան բանաձեւին դէմ՝ ի նպաստ Թուրքիոյ անոր ծաւալած լոպիինկին համար:

Ես յոյս յայտնեցի, որ հայերը կը շարունակեն իրենց ջանքերը, որպէսզի «Կեփհարթ Կրուփ»ի մնացած 200 յաճախորդները եւս դադրեցնեն իրենց պայմանագիրները, որ Տիք Կեփհարթ սուղ վճարէ իր ժխտողական լոպիինկին համար:

Խանդավառուած իրենց մեծ յաղթանակով Լոս Անճելըսի մէջ, ամերիկահայերը այժմ պէտք է ընդլայնեն իրենց քաղաքական աշխուժութիւնը՝ դաս մը տալու համար Փենսիլվենիայէն հանրապետական քոնկրէսական Պիլ Շուսթըրին, որ խայտառակ նամակ մը գրած է Քոնկրէսի անդամներուն՝ խնդրելով անոնցմէ չաջակցիլ սպասուող Հայոց Ցեղասպանութեան բանաձեւին:

Շուսթըր, անցեալ շաբաթ Ներկայացուցիչներու տան բոլոր 435 անդամներուն յղած իր «Յարգելի գործընկերներ» նամակին մէջ, անամօթաբար կոչ ըրած է՝ «զերծ մնալու բանաձեւի ստարումէն՝ կողմ չբռնելով պատմական այնպիսի իրադարձութիւններու վերաբերող բանավէճի մէջ, որոնք տեղի ունեցած են հարիւր տարի առաջ, աշխարհի միւս ծայրը»: Հետաքրքրական է, թէ ի՞նչ կը մտածէ քոնկրէսականը Հոլոքոսթի մասին, որ նոյնպէս տեղի ունեցած է «աշ-

Շար.ը էջ 18

Փարամազ Մասնաճիւղի
Հիմնադրութեան 30 Ամեակի
ՃԱՇԿԵՐՈՅԹ
ԽՐԱԽՃԱՆՔ
եւ Ազգային Երգերու Երեկոյ



Կազմակերպութեամբ՝
Փարամազ եւ Արսէն Կիտուր Մասնաճիւղերու
Երեկոն կը խանդավառէ՝
Առնօ եւ իր նուագախումբը
Շաբաթ, 28 Մարտ 2015
երեկոյեան ժամը 8:30-էն սկսեալ
Հ.Կ.Բ.Մ.-ի Կարօ Սողանալեան Սրահէն ներս
1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104
Մուտքի Նուէր $40

## ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԱՅՍ ՏԱՐԻ ՄԻԱԿԱՄ ՊԻՏԻ ԸԼԼԱՆ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑՈՎ



Օրեր վերջ ես ալ առիթը ունեցայ ակնածանքով, ամենայն զգուշութեամբ ձեռքերուս մէջ առնելու մօտ դարու մը հեռաւորութենէն եկող այդ մասունքը: Զեմ գիտեր թէ նիւթական ի՞նչ արժէք կը ներկայացնէ խաղողի ողկոյզներով արծաթանաշխ հնամենի գաւազան մը, սակայն ինծի, եղբայրներուս, Մելգոնեանցիներուս, Մելգոնեան եղբայրներու բարերարութեան արժէքին գիտակից անհատներու համար անգին է ան: Հպումը անոր հետ աջահամբոյր էր կարծես: Խոնարհիլ էր անոնց առջեւ՝ որոնք իրենց ամբողջ հարստութիւնը նուիրաբերելով ազգին, Հայոց Ցեղասպանութենէն ճողոպրած որբուկներուն համար հիմնեցին Կիպրոսի մէջ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, որ շատ շուտով դարձաւ Սփիւռքի ամենէն փայլուն



հայակերտումի, հայրենասիրութեան, դէպի հայկական եւ միջազգային մշակոյթը սէր զարգացնող կեդրոններէն մին, եզակի իր գիշերօթիկ ըլլալու հանգամանքով: Իրագործուեցաւ բարերարին երազը՝ «իմ դպրոցս պէտք է մեր վրէժը լուծէ. այդ որբ ձագուկները պէտք է իրենց հօրենական տունը նորէն շինեն, եւ անոնցմէ պէտք է պատրաստենք մեր նոր մեծերը»: Կը պղտորին այս վայրկեանին աչքերս, երբ կը մտածեմ թէ ազգին այնքան մեծեր-դաստիարակներ, տնօրէններ, գրողներ, խմբագիրներ, երաժիշտներ- եւ ընդհանրապէս գիտակից հայեր տուող այդ դարբնոցին դռները փակ են տասնամեակ մը արդէն:

Թէ ինչպէս «փրկուած» է գաւազանը եւ հասած Հարաւային Քալիֆորնիա ...Շնորհիւ Մելգոնեան եղբայրներու քաղաքակից- Կեսարացի-Արամ Եսայեանի եւ իր ազնուափայլ, բոլորին յարգանքն ու համակրանքը վայելող դուստրին, որ իր աչքի լոյսին պէս տէր կանգնած է անոր: Արամ Եսայեան, Կեսարիոյ մէջ աւարտելէ ետք հայկական նախակրթարանը, յաճախած է Թալասի ամերիկեան քոլէճը, ապա՝ ծառայած օսմանեան բանակին մէջ: Փոքրամասնութիւններուն, մանաւանդ Հայերուն պարտադրուած անտանելի ծառայութեան պայմաններէն եւ հաստատ մահէն ազատիլ փորձելով, խոյս կու տան ընկերներով ու կը յանձնուին, Թուրքերը փախուստի մատնած անգլիական զօրքերուն:

Սահմանադրութեան վերահաստատումէն վերջ, որու հիման վրայ զինուորական ծառայութեան իրաւունք կը տրուէր փոքրամասնութիւններուն, մեծ եղած է թիւը հայ երիտասարդներու, որոնք ընդունուած են Հարպիյէ օսմանեան զինուորական վարժարանը, ստացած են բարձր աստիճաններ, մասնակցած են Պալքանեան եւ Ա. Համաշխարհային պատերազմներուն, պաշտպանելով իրենց «օսմանեան հայրենիքը»: Երբ կը սկսի, սակայն Ա. Համաշխարհային պատերազմը Օգոստոս 1, 1914-ին, երիտթուրք դահիճները առիթը կ'օգտագործեն իրականացնելու հայութիւնը բնաջնջելու ճիւաղային իրենց ծրագիրը: Նախ կը զօրակոչեն 20-46 տարեկան տղամարդիկը, աւելի ուշ՝ 17-20 տարեկանները եւս, անպաշտպան կացուցանելով մնացեալ ժողովուրդը: Նախ զէնք կը տրուի զօրակոչիկներուն, բայց երեք ամիս վերջ կը զինաթափուին, կը ղրկուին աշխատանքի ջոկատներ, ուր իրենց տաժանակիր աշխատանքին դիմաց կը վարձատրուին կտոր մը չոր հացով եւ

Տար.ը էջ 19

# ՀԱՅԸ ԵՒ ՎԵՐՋԸ. ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՍՏԻԿԱ

Ես՝ իմը կխաղամ եմ, յարատեւումը, անմահութիւնը...
Գէորգ Էմին, «Յաւերժի ճամբորդը»

ԱՐՄԷՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Լաւ, ուրեմն, աշխարհի վերջը Հայաստանից է լինելու: Ցետո՞յ: վե՞րջ: Մենք էլ, ուրեմն, մարդկութեան սկզբի հետ ծագել ենք, մարդկութեան վերջի հետ էլ պիտի գնա՞նք: Հա՜յ-հա՛յ... Ինչ-որ շատ կասկածելի է: Դրա դէմ է ելնում հայի ողջ տրամաբանութիւնը եւ պատմական փորձը:

Այս պատմութիւնները՝ Ադամ, Նոյ, Արմագեդոն եւ այլն, հին հրէական առասպելներ են, բանահիւսութիւն: Նրանք դա մտցրել են իրենց Սուրբ գիրքը, որը, յետագայում, քրիստոնէութեան եւ իսլամի միջոցով տարածուել է ողջ աշխարհում: Ըստ ժամանակակից գիտութեան, Ադամի, Նոյի ու Արմագեդոնի մասին «լուրերը» չեն համապատասխանում իրականութեանը: Բայց մարդը, շատ յաճախ, ձգտում է հաւատալ, եւ ոչ քննել ու հասկանալ: Եւ այս պատմութիւններին հաւատացողներն աշխարհում դեռ շատ ու շատ են:

Աշխարհն անընդհատ զարգանում է, փոփոխւում: Փոխւում են մօտեցումները, քարացած հին կարծիքները ջախջախւում են, հնանում եւ մոռացւում: Ի յայտ է գալիս նորը, աւելի ճշգրիտը, աւելի արդիականը, աւելի առաջադիմականը: Հին առասպելներին փոխարինելու են գալիս նորերը: «Մենք ծնուել ենք, որ հեքիաթը դարձնենք իրականութիւն», ահա սովետական մի հին երգի բառերը: Դրանից յետոյ ի՞նչ է մնում՝ նոր հեքիաթ յօրինել եւ այն դարձնել իրականութիւն:

Եւ ահա, հին հրէական բանահիւսութիւնից յետոյ ներկայացնենք նոր հայկական բանահիւսութիւնը: Նրանցը հին է, մերը՝ նոր, նրանցը արդէն մտցուել է Սուրբ գիրք, իսկ մերը դեռ սպասում է դրան: Եւ ի՞նչ ենք տեսնում:

Մեր նոր բանահիւսութեան ամենայայտնի, բայց ամենաքիչ ուսումնասիրուած ժանրում՝ անեկդոտներում երբեմն նոյնպէս հանդիպում են աշխարհի ու մարդկութեան սկզբի ու վերջի թեմաները, կապուած հայերի ճակատագրի հետ, հենց մեզ հետաքրքրող համատեքստում: Եւ այսպէս.

1. Արարատ լերան վրայ է հանգրուանում Նոյեան տապանը: Մարդիկ, փղերը, ընձուղտները եւ միւսները իջնում են նաւից: Բաւական աղմկոտ տեսարան է՝ կենդանիները կարգ ու կանոն չգիտեն, Նոյի որդիները ճիպոտներով ու հարայ-հրոցով ուղղորդում են նրանց դէպի ելք: Կոկորդիլոսներն անկարգութիւն են անում: Երկու հայ հեռւում կանգնած ծխում են.

- Ախպեր, էս ի՞նչ շարժում է (բնագրում՝ ապէ, էս ի՞նչ դուիժենի ա):

- Դէ, նորից կրկէս է եկել:

2. Երկու հայ, շատ հազարամեակներ անց, խօսում են:

- Բա իմացա՞ր, էս տարի մարդկութեան վերջն է:

- Է՜, մեզ ինչ:

3. Մի հայը ասում է միւսին:

- Ախպեր, էս վերջին աշխարհի վերջը աչքիս մի տեսակ յաջող չանցաւ:

Հիմա քննարկենք: Ի՞նչ իրողութիւններից են ելնում եւ ի՞նչ են ներկայացնում այս պատմութիւնները:

1) Նախ, հայերը կապ չունեն Նոյի ու նրա ժառանգների հետ: Մենք այստեղ եղել ենք մինչեւ Նոյը: Ուրեմն, մենք մարդկութիւնից հին ենք: Մարդկութիւնից դուրս ենք, մի հին, հնագոյն ռասա, որն այստեղ եղել է մինչեւ մնացած մարդկութեան ծագումը:

2) Հայերը գիտեն ու այն ժամանակից էլ պատկերացնում էին, որ մարդկութիւնը, կենդանիները եւ ուղեկցող աղմուկ-աղաղակն ընդամէնը կրկէս է: Ընդ որում, Նոյի կրկէսը առաջին դէպքը չէ: Զէ՞ որ ասւում է, որ կրկէսը նորից է գալիս, այսինքն՝ ոչ առաջին անգամ: Ո՞վ գիտէ, թէ մինչ այդ քանի-քանի կրկէսներ են եկել ու գնացել, վերացել աշխարհից: Բացի այդ, կայ փիլիսոփայական դիտարկում՝ մարդկութիւնը կրկէս է եւ նրա պատմութիւնն էլ կրկէսային մի ներկայացում է (եւ ոչ թատրոն, ինչպէս կարծում էր Շեքսպիրը):

3) Ուրեմն, հայերը ծանօթ էին արդէն կրկէսի արուեստին, ունէին վարժեցրած փղեր եւ այլ կենդանիներ (այդ նոյն փղերն էին, որոնք յետագայում կաշառուեցին պարսիկներից եւ կռւում էին Վարդանանց դէմ): Այսինքն, քաղաքակրթութեան, թատերական արուեստի ու կենդանաբանութեան վերաբերեալ նշանակալի գիտելիքներ ունէին Նոյի ժամանակներում:

4) Մարդկութիւնը ծագում է Երեւանի կոնիակի գործարանի սիրած Նոյից, թէ Դարւինի սիրած կապիկներից, էական չէ: Հայը չի ծագում ոչ մէկից, ոչ միւսից: Ընդհանրապէս չի ծագում: «Մերն ուրիշ է» եւ նոյնիսկ «Մեր ջուրն ուրիշ ջրէն է»:

5) Հայերը կապ չունեն ոչ միայն մարդկութեան սկզբի, այլեւ մարդկութեան եւ աշխարհի վերջի հետ: Աշխարհի վերջն է, էլի, կ'անցնի, կը գնայ:

6) Ինչպէս երեւում է, բազում աշխարհի վերջեր են անցել հայի գլխով: Եւ մենք յիշում ենք նախորդ վերջերը: Մի մասը հետաքրքիր են անցել, միւսները՝ ոչ այնքան:

7) Մարդկութիւնը ծագում է ժամանակի մի ինչ-որ պահից՝ երբ Նոյն է հանգրուանում Մասիսի վրայ ու կազմակերպւում վագրերի ու կոկորդիլոսների անվտանգ դահուկավայրէջքի միամսեակը, կամ կապիկն է իջնում ծառից ու մի յարմար փայտ գտնելով՝ ջարդում մերձաւորի գլուխը, որ խլի նրա ձեռքի բանանը: Իսկ ինչ ունի սկիզբ՝ ունի նաեւ վերջ:

8) Իսկ մենք մշտնջենական ենք, յաւերժական ու յաւիտենական: Աշխարհը պարբերաբար ստեղծւում է, բնակեցւում, կործանւում, իսկ մենք եղել ենք, կանք ու կը լինենք: Հենց այս 8-րդ կէտով, որը եթէ մի քիչ թեքես, կը դառնայ յաւերժութեան նշան (8), վերջացնենք:

www.massispost.com
daily news updates

# ԲԱՑ ՆԱՄԱԿ

## ԱՄՆ-Ի ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐԱՔ ՕՊԱՄԱՅԻՆ ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԷՅՎԻՏ ՔԱՄԵՐՈՆԻՆ ՀՐԵԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ԲԵՆԻԱՄԻՆ ՆԱԹԱՆՅԱՀՈՒԻՆ

*ԱՍԱՏՈՒՐ ԿԻՒՁԵԼԵԱՆ*
*(շարունակուած նախորդ թիւէն)*

*20-րդ դարու առաջին երկու ցեղասպանութիւնները գործադրուեցան հայերու եւ հրեաներու դէմ: Տեղին է ուրեմն, անդրադառնալ նաեւ Հրեաստանի կառավարութեան հայոց ցեղասպանութեան հանդէպ որդեգրած դիրքին:*

*Անհաւատալի է որ Հրեաստանի կառավարութիւնը, հակառակ հրեայ մտաւորականութեան, կազմակերպութիւններու, հաստատութիւններու եւ ընդհանրապէս հանրութեան կողմէ եղած ճնշումին , ԱՄՆ-ի եւ Բրիտանիոյ օրինակին հետեւելով՝ կը մերժէ ճանչնալ Հայոց Ցեղասպանութիւնը: Կ'ակնկալուէր որ աւելի քան որեւէ պետութիւն՝ առաջին առիթով Հրեաստանը հասկնար հայոց տառապանքը: Հրեաստանի կառավարութիւնը պէտք է յիշէ որ դաշնակիցներու որդեգրած կրաւորական կեցուածքը հայոց ցեղասպանութեան հեղինակներուն հանդէպ՝ համարձակութիւն տուաւ Հիթլերին ծրագրելու եւ գործադրելու հրեաներու Հոլոքոսթը եւ ընելու հետեւեալ վատահաբաւ յայտարարութիւնը.*

*«Ո՞վ այսօր կը յիշէ հայերու բնաջնջումը»:*

*Բարեբախտաբար կան բազմաթիւ հրեաներ եւ' Հրեաստանի, եւ' ի սփիւռս աշխարհի, որոնք պատրաստ չեն ճշմարտութեան հետ՝ իրենց արժանապատւութիւնն ալ աճուրդով վաճառելու տնտեսաքաղաքական նկատառումներու համար:*

*«Կը խոնարհիմ այս աւելի վեհ տառապանքին առջեւ: Կը վերցնեմ փշաթագը Իսրայէլի գլխուխէն եւ կը զետեղեմ զայն՝ Հայաստանի գլխուն»:*

ISRAEL ZANGWILL

*Անուանի հրեայ գրող: Տես՝ «Նոր Հայաստան», Նիւ Եորք 1919:*

*****

*«Մէկ ու կէս միլիոն մարդիկ անփութութեան պատճառով չանհետացան: Անոնք անհետացան կանխամտածուած ծրագրով : Ձեմ կարծեր որ [Հրեաստանի] կառավարութիւը պարտի պաշտօնական որոշում առնել այս հարցի մասին, սակայն պէտք է պարզաբանենք Թուրքերուն, որ չենք կրնար իրենց քաղաքական պահանջքներն ընդունիլ, անտեսելով պատմական իրականութիւն մը : Բարոյական դիրքորոշում մը չի կրնար պայմանաւորուիլ քաղաքական շահերով. անոնք երկու տարբեր ուղիներ են»:*

(BEILIN)

*Հրեաստանի Արդարադատութեան Նախարար, որ վերոգրեալ յայտարարութիւնն ըրած է 2000 թուին, Ապրիլ 24-ի շաբաթը: Մէջբերումը՝ Lilly Galili-ի «A Holocaust by Any Other Name» գիրքէն:*

*****

*2001 թուին տարբեր երկիրներու մէջ ապրող 126 ականաւոր հրեաներ, Հրեաստանի կառավարութեան գրած իրենց նամակին մէջ հաստատելէ ետք հայոց ցեղասպանութեան վաւերականութիւնը, ըսած են՝*

*«Ստորագրեալներս՝ մտաւորականներ, ռաբբիներ, ուսուցիչներ, համայնքի ղեկավարներ եւ հրեական աւանդութեանց եւ մշակոյթի աշակերտներ ենք: Որպէս հրեայ՝ հասարակաց շատ նմանութիւններ ունինք հայերու հետ: Երկուքս ալ դարձած ենք զոհ 20-րդ դարու ընթացքին ցեղասպանութեան, բայց վերապրած ենք՝ ի հեճուկս անոնց, որոնք աշխատած են գլանալ մեզ մեր գոյութեան իրաւունքը:*

*"Այս տարի, 2001 թուականին կը նշուի Հայաստանի մէջ քրիստոնէութեան պաշտօնական որդեգրման 1700-ամեակը: Մենք, որպէս հրեաներ, կ'ողջունենք մեր հայ բարեկամները եւ անոնց բերած նպաստը արեւմտեան հասարակութեան եւ մշակոյթին»:*

*(Նամակը ստորագրողներու կրճատուած անուանացանկը տեսնել անգլերէն բնագրին մէջ):*

*Փրոֆ. Իսրայէլ Ձերնի, անուանի հոլոքոսթագէտ գիտնականը, 4 Մարտ 2002 թուին Հայոց Ցեղասպանութեան մասին Հրեաստանի արտգործ նախարարութեան գրած իր նամակին մէջ ի միջի այլոց ըսած է՝*

*«Ես որպէս հրեայ մարդ եւ Հրեաստանի քաղաքացի, ամօթ կը զգամ այն դիրքորոշման համար, զոր որդեգրած են մեր դեսպանն ու արտգործ նախարարութիւնը, ըստ որուն անոնք կը մերժեն ճանչնալ 1915-ի հայոց ցեղասպանութիւնը: Սա համազօր է ուրանալ մեր ժողովուրդի Հոլոքոսթը:*

*Ներփակ կը ղրկեմ օրինակ մը այն յայտարարութենէն, զոր 126 հոլոքոսթագէտ հրեայ գիտնականներ ստորագրեցին 2000 թուականին, հաստատելով հայոց ցեղասպանութեան վաւերականութիւնը: Ստորագրողներու մէջ էին հրեական Հոլոքոսթի մեծագոյն մասնագէտը, մեր Փրոֆ. Եհուտա Պաուերը, ինչպէս նաեւ խաղաղութեան Նոպելեան մրցանակի դափնեկիր, Հոլոքոսթէն ազատած՝ Էլի Ուիզելը»:*

PROF. ISRAEL W. CHARNY

*Ձեղասպանութեան Հանրագիտարանի գլխաւոր խմբագիր, վարիչ տնօրէն Երուսաղէմի Հոլոքոսթի եւ Ցեղասպանութեան Ինստիտուտի:*

*****

*Ի գիտութիւն յայտնեմ որ իմ ընտանիքի մեծ մասը՝ մեծ հայրս, մեծ հօրեղբայրներս, մեծ մօրաքոյր-հօրաքոյրերս, ներառեալ չորս տարեկան քոյրս, տասնեակ հազարաւոր ուրիշ մարդոց, կանանց եւ երեխաներու հետ Կիլիկիայէն՝ ուր ծնած եմ ես եւ ուր իմ նախահայրերս ապրած են աւելի քան հազար տարի՝ աքսորուած են Տէր Զօր, սուրիական անապատ...: Տեղահանութեան ընթացքին անոնք մեծաւ մասամբ կամ սպանուած են, կամ ալ՝ սովամահ եղած: Ըստ մօրս, երբ չորս տարեկան քոյրս չէ կրցած*

*Շար.ը էջ 19*



# ԱՀԱԶԱՆԳԵԼՈՎ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆԸ՝ ԻՄԱՍՏԱՒՈՐԵՆՔ ՄԵՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

***ՅՈՎՀԱՆՆԷՍ ՋԱՏԻԿԵԱՆ***
***Գրական Թերթ***

*Յովհաննէս Ջատիկեան 2005 թ.՝ Ցեղասպանութեան 90-ամեակին նուիրուած միջազգային գիտաժողովում հայրենիքից հեռացած Թուրք Ակչանի հետ զրոյցի ժամանակ, երբ նրան ասացի. «Ո՞ւր է քո պոլոզ գլուխը, փոքրիկ աչքերը», նա պատասխանեց. «Ես այդպէս եմ ծնուել»: Հակադարձեցի նրան. «Դուք հայի, յոյնի կամ ասորու խառնուրդ էք, նոր Թուրքի տիպար»: Յաջորդ օրերին, երբ հանդիպում էինք, հայերէն, ժպիտախառն ողջունում էր. «Բարեւ, ախպեր...»:*

*Խօսելով Հայոց Մեծ ողբերգութեան, մարդկութեան դէմ Թուրքերի կատարած յանցագործութեան մասին, չպէտք է սահմանափակուել միայն 1915 Թուականով:*

*Ր. Զարաքոլու Թուրք իրաւապաշտպանը, դեռեւս 2005 Թ. դիմելով իր ժողովրդին եւ առաջարկելով Ապրիլի 24-ին մի-մի ծաղիկ դնել զոհերի յիշատակին, գրում էր. «2015-ին կը բոլորի նրա (Մեծ եղեռնի-Հ.Ջ.) մէկ դարը: Ինչ տերմինով էլ փորձենք բնութագրել, այլեւս ոչ ոք չի կարող ուրանալ, որ այդ Թուականին տեղի է ունեցել յանցագործութիւն մարդկութեան դէմ»: Շարունակելով իր ժողովրդին ուղղուած պատգամը՝ հեղինակը առաջարկում է չվհատուել, եթէ ծաղիկը դնելու տեղ չգտնուի՝ «Եթէ պատեհ տեղ չգտնէք, ծաղիկը նետէք Սեւ ծովը, նետէք Քըզըլըրմաք, Քըզըլթեփէ կամ այն գետերը, որոնք Քանլըրդերէ (Արիւնոտ գետ) են կոչւում»: Ինչո՞ւ Սեւ ծովը, որովհետեւ Թուրք բարբարոսները միայն Տրապիզոնից ծովը Թափեցին 32.000 հայերի, Թուրքական բռնութիւններից խուսափելու համար հարիւր հազարաւոր հայ կանայք ու աղջիկներ ինքնակամ խեղդուեցին նշուած գետերի ջրերում:*

*1919 Թ. Կ. Պոլսում կայացած Մեծ եղեռնի կազմակերպիչների դատավարութեանը որպէս վկայ մասնակցող Մուստաֆա Քեմալը, որը ծառայում էր Արեւմտեան Հայաստանի զօրքերում, եւ յետագայում ոճրագործութեան մասնակիցը ստանալու էր Աթաթուրք անունը, դատարանում յայտարարեց, որ կատարուածը «չլսուած ու չտեսնուած յանցագործութիւն է»:*

*Ոճրագործ Թալիաթը՝ ցեղասպանութեան կազմակերպիչը, յայտարարեց. «Ես պատրաստ եմ մեռնել այն բանի համար, ինչ կատարեցի եւ գիտեմ, որ կը մեռնեմ դրա համար»:*

*Թուրքիան իր պատմութեամբ պատանդ է մեծ տէրութիւնների ձեռքում: Պատանդ, որովհետեւ այդ պետութեան իւրաքանչիւր տարին, ամիսը, օրը, ժամը, վայրկեանը լի են եղեռնագործութիւններով, որոնց համար երբեւէ պատասխան չի տուել: Հաւատարիմ «սրով նուաճածը սրով պահպանելու» իրենց տեսութեանը, սկսած 13-րդ դարից եւ աւելի բացայայտ՝ 1453 Թ.-ից իրականացնում էր զաւթած տարածքների բնիկ ժողովուրդների ոչնչացման, ուծացման քաղաքականութիւն՝ իրականացնելու համար Թուրք ժողովուրդ ձեւաւորելու ծրագիրը: Ասուածը աւելի քան համոզիչ ու տպաւորիչ ներկայացնելու համար, դիմենք շրջանառութեան մէջ գտնուող մի քանի փաստերի. 1822 Թ. Թուրքերը Քիոս կղզում սրատեցին 50.000 յոյների, 1823 Թ. Միսոլունգիայում՝ 8850 յոյների, 1850 Թ. Մոսուլում՝ 10.000 ասորիների, 1860 Թ. Լիբանանում՝ 12.000 արաբների, 1876 Թ.՝ 14700 բուլղարների, 1894-1896 ԹԹ.՝ 500.000 հայերի, 1903 Թ.՝ 14667 մակեդոնացու, 1915 Թ.՝ աւելի քան 2 մլն հայերի: Սրանք առաւել յայտնի, արձանագրուած փաստերն են: Իսկ Թէ ինչքան է բռնի կրօնափոխուածների, ազգային պատկանելութիւնից զրկուածների քանակը, մնում է պատմական գաղտնիք:*

*18-րդ դարի երկրորդ կէսին կապիտալիզմի բուռն զարգացումը պահանջում էր նոր շուկաներ ու դրանց հասնելու ճանապարհներ: Այն ժողովուրդները, որոնք գտնւում էին այդ խաչմերուկներում, ենթակայ էին ոչնչացման կամ ստրկացման: Այդպէս հայ ժողովուրդը զրկուեց ոչ միայն իր տարածքային գերակայութիւնից օգտուելու, այլեւ հաւատարիմ գործընկեր, զինակից ունենալու հնարաւորութիւնից, որովհետեւ Արեւելք ձգտող մեծ տէրութիւններին հետաքրքրողը ոչ թէ հայ ժողովուրդն էր, այլ նրա հայրենիքը: Արիւնալի այս պայքարում Թուրքիան վերածուեց կիսագաղութի, իսկ դէպի տարածաշրջան ձգտող Ռուսաստանը՝ եւրոպական կապիտալի ազատ ներհոսքի տարածքի: Եւ չնայած դրան, Ռուսաստանը երբեք չհրաժարուեց չսառչող Միջերկրական ծով դուրս գալու ծրագրից, ինչի արդիւնքում էլ Հայաստանը նրան անհրաժեշտ էր որպէս յենակէտ, նախադուռ: Այս հայեցակէտից էլ Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան տագնապում էին ոչ Թէ հայ ժողովրդի ճակատագրի համար, այլ դէպի Արեւելք Ռուսաստանի ճանապարհը փակելու անհրաժեշտութիւնից: Այս պատճառով էլ մեծ տէրութիւնները խոչընդոտել ու խոչընդոտելու են Հայկական հարցի լուծմանը, Հայոց Մեծ եղեռնի միջազգային ճանաչմանը: Թուրքիան՝ բռնազաւթիչ այդ պետութիւնը, ինչքան էլ զարմանալի Թուայ, ընդունում է Հայաստանի անկախ գոյութիւնը, որովհետեւ այն պատնէշ է Ռուսաստանի դէմ, իսկ Թոյլ ու շրջափակուած Հայաստանը առայժմ վտանգ չի կարող ներկայացնել իր տարածքային ամբողջականութեանը: Տեսնում ենք՝ ինչ-որ չափով, սակայն տարբեր եզրահանգումներով ու նպատակներով համընկնում են Թուրքիայի ու մեծ տէրութիւնների տեսակէտները: Նրանք, խրախուսելով Թուրքիայի նման դիրքորոշումը, Հայկական հարցը օգտագործում են որպէս զսպաշապիկ: Եւ պատահական չէ, որ Թուրք-ամերիկեան, Թուրք-ռուսական յարաբերութիւնների ցանկացած շեղման ժամանակ յիշեցւում է Հայկական հարցը, կամ Թուրքիայի ցանկացած ընդվզմանը յաջորդում է այս կամ այն երկրի կողմից Մեծ եղեռնի ճանաչման փաստը:*

*1915 Թ. Օգոստոսի 24-ի Անգլիայի, Ֆրանսայի եւ Ռուսաստանի յայտնի յայտարարութիւնով սկսուեց Մեծ եղեռնի ճանաչման գործընթացը: Աշխարհի չորրորդ պետութիւնը, որ ընդունեց Մեծ եղեռնը, Թուրքիան էր, յանձին 1919 Թ. Յունուար-Յունիս Կ. Պոլսում կազմակերպուած դատավարութեան, որի վերջնական ակտով մահուան դատապարտուեցին եղեռնի կազմակերպիչները: Այսօր աշխարհի 22 երկրներ ու կազմակերպութիւններ, ԱՄՆ 41 նահանգներ ճանաչել են Մեծ եղեռնը: Սա, ինչ խօսք, համայն հայութեան, Հայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքականութեան, Հայ դատի գրասենեակների, սփիւռքահայութեան գործունէութեան արդիւնքն է: Այս գործընթացի արդի փուլը, սակայն, առաջադրում է նոր պահանջներ, նոր մօտեցումներ: Ներկայումս աշխարհում ընթանում է մարդկութեան դէմ յանցագործութիւնները բացայայտելու, կանխելու, դատապարտելու շարժում: Նման իրավիճակում, ինչպէս ցոյց են տալիս անցած 99 տարիները, Հայոց Մեծ ողբերգութեան ճանաչման արդիւնաւէտութեան գործակիցը նուազում կ՚ապրի: Որպէսզի խուսափենք այդ իրավիճակից, անհրաժեշտ է Հայոց ցեղասպանութեան գաղափարը շաղկապել նոր քաղաքական զարգացումների հետ, մեր ազգային վիշտը չառանձնացնել 1915 Թուականից առ այսօր տեղի ունեցած աւելի քան 45 այլ ցեղասպանութիւններից, միաժամանակ ընդգծելով Հայոց ողբերգութեան առանձնայատկութիւնները, որոնք ամփոփւում են հետեւեալ տեսակէտների շուրջ. ա) Հայոց ցեղասպանութիւնը կատարուել է հայ ժողովրդի պատմական հայրենիքում, բ) այդ ոճրագործութեան նպատակը բնիկ ժողովրդի հայրենիքի զաւթումն էր, գ) Հայոց ցեղասպանութիւնը պատմութեան մէջ իրականացուած պետական քաղաքականութիւն էր, դ) ցեղասպան երկիրը արդէն 1919 Թ. ճանաչել է կատարուած ոճրագործութիւնը, ե) Հայոց ցեղասպանութիւնը պետական շարունակական գործողութիւն էր, որն սկսուել է 15-րդ դարից եւ հասել 1988, 1989, 1990-1994 ԹԹ. Սումգայիթի, Պաքուի, արցախահայութեան զանգուածային կոտորածների ժամանակաշրջանին, զ) միջազգային հանրութիւնը, ՄԱԿ-ը, Եւրախորհուրդը, միջազգային միւս կազմակերպութիւնները պէտք է հնարաւորութիւն ստեղծեն Թուրքիայում ապրող միլիոնաւոր ծպտեալ հայերին վերադառնալ իրենց ազգային պատկանելութեանը, է) չեղեալ յայտարարել Հայոց ցեղասպանութեան շարունակութիւն հանդիսացող 1921 Թ. Մարտի 16-ի Մոսկուայի եւ Հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերը:*

*Կուռ հայեցակարգի վերածելով այս եւ այսօրուայ ղրիմեան, ուկրանիական, սիրիական գործօնների առանձնայատկութիւնները, պիտի ջանալ, որ Հայկական հարցի հետ կապուած խնդիրներն ընդգրկուեն միջազգային կառոյցների օրակարգում, եւ հետամուտ լինել դրանց իրականացմանը:*

*Պայքարը տանելով այս ուղղութեամբ՝ չպէտք է ուշադրութիւնից դուրս Թողնել այն գերխնդիրը, Թէ արդեօք հասունացե՞լ է կամ կա՞ն Թուրքիայի նկատմամբ վերաբերմունքի փոփոխութեան նախադրեալներ: Առաջին հերթին խնդրի լուծումը պէտք է տեսնել միաբեւեռ քաղաքականութեան ձգտող ԱՄՆ-ի քաղաքականութեան համատեքստում: Այսօր արդէն հասունացել է միջազգային դատարանի խնդիրը, քանզի մարդասիրական նկատառումներից ելնելով, Թէեւ որոշ երկրներ կը ճանաչեն Հայոց ցեղասպանութիւնը, սակայն դա որեւէ ազդեցութիւն չի Թողնի Թուրքիայի ժխտողական քաղաքականութեան վրայ, որովհետեւ նեղուցների պահակ երկիրը դեռեւս 1945 Թ. Տրումէնի դոկտրինայով համարւում է ամերիկեան «կենսական» տարածք: Ամերիկեան քաղաքականութիւնը երբեք չի փոխուի Հայոց ցեղասպանութեան հարցում, քանզի տիրապետողը այն վախն է, որ ճանաչումն իր հետ կը բերի հատուցման, տարածքային պահանջներ, իսկ ԱՄՆ-ի ցանկացած նախագահ երբեք չի կարող ընդունել Հայաստանի ընդարձակումը, պատմական տարածքների վերադարձը, որովհետեւ ցանկացած զիջում Հայկական հարցում կը նշանակի Ռուսաստանի ուժեղացում, Մերձաւոր ու Միջին Արեւելքում նրա դիրքերի ամրապնդում, ինչը ջախջախիչ հարուած կը լինի «Մեծ Միջին Արեւելք» ծրագրին: Այսօր արդէն ակնյայտ է, որ դանդաղ, բայց որոշակի հասունացում է ապրում աշխարհաքաղաքական նոր յարաբերութիւններ հաստատելու միտումը, ինչի պայմաններում նոր հարթութեան վրայ կը տեղափոխուեն Թէ՛ հայ-Թուրքական, Թէ՛ հայ-ատրպէյճանական յարաբերութիւնները, որոնք Թերեւս Թօթափեն կոշտութիւնը, բարդոյթները, ականջալուր կը լինեն միջազգային հանրութեան՝ պատմական ճշմարտութեան վրայ յենուած կառուցողական մօտեցումներին:*

*Վերջին տեսակէտը, սակայն, Թէեւ կանխատեսելի է, բայց Հայկական հարցը Արեւմուտքի ծրագրերում կը մնայ յաջորդ փուլ տեղափոխուելու կարգավիճակում:*



## PANIC ATTACK-Ի ՀԵՏ ԿԱՊՈՒԱԾ 9 ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ

1.Panic Attack-ը ճնշուածութեան դէմ հակազդեցութիւն է: Panick Attack-ը կրնայ պատահիլ որեւէ ժամանակ նոյնիսկ առանց դրդապատճառներու եւ կրնայ տեւել մինչեւ տասը վայրկեան: Երբեմն, Panick Attack-ը կը յառաջացնէ ճնշուածութիւն եւ անձկութիւն:

2.Panick Attack-ի հետեւանքով անհատը կրնայ մարիլ:

Հոգեբանական ախտանշաններու կողքին, Panick Attack-ը նաեւ ունի ֆիզիքական ախտանշաններ, ինչպէս՝ սրտի արագ տրոփում, արեան ճնշումի խախտում, մարմնի դող, շնչառութեան դժուարութիւններ, կուրծքի ցաւ եւայլն: Սակայն մարելու երեւոյթը մաս չի կազմեր այս ախտանշաններու շարքին: Երբ անհատը մարի, հաւանաբար ան կը տառապի ուրիշ առողջապահական հարցերէ:

3.Անձկութիւնը եւ Panick Attack-ը նոյնն են: Անձկութիւնը կարելի է յայտնաբերել հոգեբանական բոլոր անհանգստութիւններու պարագային: Սակայն անձկութիւնը ընդհանուր անհանգստութիւն մըն է, որ կ՛ընդգրկէ Panick Attack Disorder, Generalized Anxiety Disorder, Phobia, Obsessive Compulsive Disorder, եւայլն: Սակայն կարելի չէ իւրաքանչիւր անհանգստութիւն նոյնացնել անձկութեան հետ:

4.Panick Attack-ը անբուժելի է: Հոգեբանութեան վերաբերեալ ամէնէն շատ ընդհանրացած կարծրատիպերէն է թէ հոգեբանական անհանգստութիւնները անբուժելի են: Իւրաքանչիւր անհանգստութիւն, ներառեալ Panick Attack-ը, ունի իր յատուկ բուժման միջոցը: Կարգ մը անհանգստութիւններ կարելի է բուժել քանի մը ամսուան ընթացքին, իսկ աւելի լուրջ անհանգստութիւններ կը կարօտին տարիներու վրայ երկարող բուժումներու:

Սխալ է այն ենթադրութիւնը թէ հոգեբանական անհանգստութիւնները բուժելի են միայն դեղերու օգտագործմամբ:

5.Դժուար է Panick Attack-է տառապող անհատներու հետ յարաբերիլ: Panick Attack-ը չի թերացներ անհատի մը յարաբերութիւն մշակելու փափաքն ու կարողութիւնները: Panick Attack-է տառապող անհատը կրնայ շարունակել իր սովորական կեանքը առանց որեւէ ընկերային հարցերու:

6.Panick Attack-ը կրնայ լուրջ անհանգստութիւններու առաջնորդել: Կարգ մը մարդոց մօտ ընդհանրացած է այն համոզումը թէ Panick Attack-է տառապող անձեր նաեւ կը տառապին լուրջ հոգեբանական անհանգստութիւններէ, ինչպէս՝ երկբեւեռային (bipolar) անհանգստութենէ եւ սքիզոֆրինիայէ: Այս երկու անհանգստութիւններուն ախտանշանները ընդհանրապէս կապ չունին Panick Attack-ի հետ եւ անոնց էակցութեան հաւանականութիւնները բաւական ցած են:

7.Խորունկ շնչառութիւնը կրնայ դադրեցնել Panick Attack-ը: Երբ ճնշուած կամ մտահոգ ըլլանք մեզի կը թելադրեն խորունկ շունչ առնել: Սակայն, Panick Attack-ի պարագային խորունկ շնչառութիւնը պատճառ կը դառնայ յաւելեալ նեղութեան եւ անհատը կ՛ունենայ խեղդուելու զգացումը: Խորունկ շնչառութիւնը նաեւ պատճառ կը դառնայ, որ մարմինը պահանջէ արագ շնչառութիւն՝ արտաշնչելու համար մարմնին մէջ գտնուող յաւելեալ carbon dioxide-ը: Այս պարագային նաեւ կ՛արագանան սրտի զարկերը:

8.Panick Attack-է տառապող մարդոց անկարելի է օգտակար դառնալ: Panick Attack-ը անձնական փորձառութիւն մըն է, որուն իւրաքանչիւր անձ կը յարմարի տարբեր ձեւով: Կարգ մը մարդիկ պէտքը կը զգան հարազատներու եւ մտերիմ ընկերներու աջակցութեան՝ նոյնիսկ Panick Attack դիմագրաւած ժամանակ: Այլ մարդոց պարագային, առանձնութիւնը դարմանումի եւ յարմարուելու արդիւնաւէտ միջոց է: Կարեւոր է, իմանալ թէ ո՞ր տուեալ անհատը ո՞ր խումբին մաս կը կազմէ:

9.Պէտք է խուսափիլ Panick Attack պատճառող առարկաներէն կամ կացութիւններէն: Panick Attack-է տառապող մարդիկ յաճախ կը փորձեն խուսափիլ այն վայրերէն կամ կացութիւններէն, որոնք առնչուած են իրենց անհանգստութեան հետ: Սակայն, Panick Attack-ը կրնայ պատահիլ առանց դրդապատճառի: Հետեւաբար, խուսափիլը լուծում չէ այս հարցին:

## ԱՆԿԱՆՈՆ ՈՒՏԵԼՈՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆԸ ՎՆԱՍԱԿԱՐ Է ՈՒՂԵՂԻՆ ՀԱՄԱՐ

Լոս Անճելոսի մէջ գտնուող Քալիֆորնիոյ համալսարանի հետազօտական խումբը յայտնաբերած է թէ գիշերուան ուշ ժամերուն ուտելու սովորութիւնը հակաառողջապահական երեւոյթ է, ոչ միայն ֆիզիքական առողջութեան, այլ նաեւ՝ մտային առողջութեան համար: Այս ծիրին մէջ գիտնականներ յայտնաբերած են նաեւ, թէ 15 միլիոն ամերիկացիներ աշխատանքային ժամերու պատճառով ունին անկանոն ուտելու սովորութիւն:

Ներկայ կեանքի պայմանները կը պահանջեն երկար աշխատանքային ժամեր, որուն ընթացքին մարդիկ յաճախ կը դիմեն արագ սնունդի, որ հասանելի է բոլորին՝ օրուան բոլոր ժամերու ընթացքին: Այս սովորութիւնը կը խախտէ մարմնի ներքին «ժամացոյցը», որ կը կանոնաւորէ քնանալու, աշխուժութեան, ուտելու եւ մարմնին մէջ հորմոններու արտադրութեան ընթացքը:

Մարմնի ներքին «ժամացոյց»ի խախտումը կրնայ ընթացք տալ երկրորդ տեսակի շաքարախտի զարգացման եւ տկարացնել մարմնի դիմադրողական համակարգը: Սակայն Քալիֆորնիոյ համալսարանի գիտնականները յայտնաբերած են թէ ան նաեւ կրնայ թերացնել սորվելու եւ յիշողութեան կարողութիւնները:

Գիշերուան ուշ ժամերուն ուտելու սովորութիւնը կը խախտէ քնանալու ծիրը, ինչպէս նաեւ քնացած ժամանակ կ՛աշխուժացնէ մարսողութեան համակարգը եւ պատճառ կը դառնայ սրտի արագ տրոփումներուն: Նախապէս կատարուած հետազօտութիւններ պարզած են թէ անկանոն ուտելու եւ քնանալու սովորութիւնները նաեւ կը բարձրացնեն քաղցկեղի, ընկճուածութեան, յոգնածութեան եւ սրտանօթային հարցերու հաւանականութիւնները:

## ԻՆՔՆԱՊԻՏԱԿՈՒՄԻ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Ձախողութեան եւ մեկուսացման նպաստող գործօնները բազմաթիւ են, սակայն հոգեբաններ վերջերս ուշադրութիւն կը դարձնեն ինքզինք պիտակելու հետեւանքներուն վրայ, որոնք կրնան նուաստացնել անհատին ինքնավստահութիւնն ու ինքնարժեւորումը եւ պատճառ դառնալ անոր ձախողութեան եւ մեկուսացման: Ինքզինք պիտակելու երեւոյթը արդիւնք է ինքնապաշտպանման հոգեբանական իրավիճակի, որուն շնորհիւ մարդիկ կը փորձեն պաշտպանուիլ ձախողութեան հաւանականութիւններէն:

Բնական է, որ ոչ մէկ անձ կ՛ուզէ ձախողիլ: Եւ երբեմն ձախողութիւնը կանխարգիլելու համար մարդիկ հեռու կը մնան նոր նախաձեռնութիւններէ եւ աշխատանքներէ: Այս փախուստը արդարացնելու համար, անոնք կը սկսին իրենց անձը պիտակել եւ ժամանակի ընթացքին կը համոզուին թէ այս պիտակումը ճիշդ է: Օրինակ, երբ անհատ մը դժուարութիւն ունենայ շարունակելու իր բարձրագոյն ուսումը, ինքզինք կրնայ պիտակել որպէս ուսման ծիրին մէջ անկարող անձ եւ այս երեւոյթը պատճառ կը դառնայ որ ան արդարացնէ համալսարանը ձգելու որոշումը:

Սակայն, միշտ չէ որ մեր պիտակումները ճիշդ դուրս կու գան: Անոնք պարզապէս դիւրին միջոցներ են փախուստ տալու այն աշխատանքներէն, որոնք կը պահանջեն յաւելեալ ջանք, ժամանակ եւ աշխատանք: Ճնշուածութենէ եւ յաւելեալ ճիգ թափելու կացութենէն փախուստ տալու համար, մարդիկ կարճ ժամանակի մէջ կ՛որոշեն թէ տուեալ աշխատանքը անյարմար է իրենց համար:

Այս երեւոյթը սովորութեան վերածուելու պարագային, կրնայ ժխտական հետեւանքներ ունենալ անհատին հոգեբանական առողջութեան վրայ: Երբ երկար ժամանակ ետք, անհատը անդրադառնայ թէ ան ոչ մէկ յաջողութիւն ձեռք բերած է կամ ոչ մէկ ոլորտի մէջ գոհացուցիչ յառաջդիմութիւն ունեցած է, անոր ինքնավստահութիւնը կը սկսի նուազիլ: Իսկ երբ ինքնավստահութիւնը ցած ըլլայ, դժուար կը դառնայ նոր աշխատանքներու եւ աշխատելաձեւի ձգտելու որոշումը: Եւ այսպէս, անհատը շղթայուած կ՛ըլլայ իր ձախողութիւններուն եւ պիտակումներուն:

Նման կացութենէ խուսափելու համար, թելադրելի է, որ անհատը առաջին հերթին անկեղծ ըլլայ իր անձին եւ զգացումներուն հետ: Որքա՞ն ճիշդ են պիտակումները, ի՞նչ հիմքեր ունին անոնք, ի՞նչ են անոնց հետեւանքները եւ ինչպէ՞ս կարելի է փոխել համոզումները: Այս բոլորին պատասխան տալէ ետք է, որ անհատը կրնայ հրաժարիլ իր պիտակումներէն եւ ձգտիլ յաջողութիւններու:

## ՈՒՐԱԽ ԶՈՅԳԵՐՈՒ 10 ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1.Նոյն ժամանակ քնանալ: Բոլոր զոյգերը իրենց յարաբերութեան սկիզբի հանգրուաններուն կը փափաքին նոյն ժամանակ քնանալ, նոյնիսկ երբ անոնց աշխատանքային ժամերը տարբեր ըլլան: Ըստ հոգեբաններուն, այս սովորութիւնը պէտք է պահպանուի մինչեւ վերջ, որովհետեւ ան կը ստեղծէ թէ՛ ֆիզիքական եւ թէ՛ հոգեբանական մտերմութիւն:

2.Նոյնանման հետաքրքրութիւններ մշակել: Իւրաքանչիւր անձ տարբեր է միւսէն եւ այս տարբերութիւնն է, որ կը ստեղծէ անհատի մը «ես»ը: Սակայն չափազանց տարբերութիւնները կրնան ժխտական ազդեցութիւն ունենալ յարաբերութեան վրայ: Յարատեւ ջանքերով եւ փոխ զիջումներով կարելի է ստեղծել նոյնանման հետաքրքրութիւններ, որպէսզի իւրաքանչիւր անձ չկորսուի իր անձնական աշխարհին մէջ՝ մոռնալով իր կողակիցը:

3.Ձեռքերը բռնած կամ կողք կողքի քալել: Թէեւ նման երեւոյթ մը աւելի սովորական է նորակազմ զոյգերու մօտ, ձեռք բռնելու կամ կողք կողքի քալելու սովորութիւնը չի վնասեր մնացեալ զոյգերուն: Ուրախ զոյգերը կ՛անդրադառնան այս սովորութեան կարեւորութեան:

4.Վստահիլ եւ ներել: Անհամաձայնութիւնները անխուսափելի են յարաբերութեան մէջ, սակայն հարցերը լուծելու ամէնէն արդիւնաւէտ միջոցներէն է վստահութեամբ եւ ներելով գայն աւարտելը:

5.Կեդրոնանալ դրական կէտերուն վրայ: Զոյգերու մօտ երբեմն կը յառաջանայ կողակիցին սխալներուն անդրադառնալու եւ անոնց վրայ կեդրոնանալու սովորութիւնը: Ուրախ զոյգերը նաեւ կը կեդրոնանան իրենց կողակիցի դրական արարքներուն եւ վարմունքին վրայ:

6.Ֆիզիքական մտերմութիւնը պահպանել: Գիտական հետազօտութիւնները պարզած են թէ ֆիզիքական հաղորդակցութիւնը կը բարձրացնէ հաճոյք պատճառող եւ ընկճուածութեան դէմ պայքարող հորմոններու քանակը:

7.Իւրաքանչիւր առաւօտ լաւ խօսքերով դիմաւորել զիրար: Առօրեայ կեանքի ճնշուածութիւնը եւ տաղտուկները, ինչպէս նաեւ աճապարանօք վիճակը կրնան պատճառ դառնալ, որ յատկապէս առաւօտեան ուշադրութիւն չդարձնենք մեր կողակիցին: Սակայն, ուրախ զոյգերը չեն մոռնար դրական խօսքեր ուղղել իրենց կողակիցին՝ նախքան աշխատանքի մեկնիլը:

8.Ամէն գիշեր նախքան քնանալը գիշեր բարի ըսել: Ըստ հոգեբաններու, «Գիշեր բարի» ըսելու սովորութիւնը կարեւոր բաղադրութիւն է ուրախութեան եւ մտերմութեան պահպանման: Որքան ժամանակ անցնի յարաբերութեան մէջ այնքան աւելի կարեւոր կը դառնայ նման մանրամասնութիւններու գոյութիւնը:

9.Օրուան ընթացքին ստուգել «կացութիւնը»: Կարեւոր է, շարունակական կապի մէջ մնալ կողակիցին հետ ստուգելու համար անոր հոգեկան վիճակը: Երկար ժամանակ կապի բացակայութիւնը կրնայ անակնկալներու առջեւ դնել մեզ հանդիպման ժամանակ:

10.Հպարտ ըլլալ կողակիցով: Որքան կարեւոր է յարաբերութեան յաջողութիւնը այնքան կարեւոր է կողակիցներու անհատական ուրախութիւնն ու հանգստութիւնը: Մեր կողակիցը պէտք է ըլլայ մեր հպարտութեան աղբիւրներէն մէկը: Հպարտութիւնը կը վերանորոգէ սիրոյ, մտերմութեան եւ երջանկութեան զգացումները:

## ԵԿԷ՛Ք ՔՈՆԿՐԵՍԷՆ ՎՌՆՏԵՆՔ

*Շարունակուածէջ 7-էն*

*խարհի միւս ծայրը», աւելի քան 70 տարի առաջ:*

*Իր լկտի նամակին մէջ, քոնկրէսական Շուսթըր կասկածի տակ կը դնէ Հայոց Ցեղասպանութեան ճշմարտութիւնը՝ յայտարարելով, որ առկայ են «երկու հակասական պատմութիւններ այն մասին, թէ ի՛նչ տեղի ունեցած է Առաջին Համաշխարհային պատերազմի ժամանակ, Օսմանեան կայսրութեան մէջ ապրող հայերուն հետ»: Իր այլասերուած տրամաբանութեամբ, քոնկրէսականը կը պնդէ, որ «1915ի իրադարձութիւնները- ցեղասպանութիւն չեն հանդիսանար», որովհետեւ՝ «աւելի քան երկու միլիոն օսմանեան քիւրտեր, արաբներ եւ մահմետականներ-նոյնպէս տուժած են այս հակամարտութեան ընթացքին»: Անոր մատնանշումը՝ Առաջին Համաշխարհային պատերազմին «աւելի քան երկու միլիոն օսմանեան քիւրտերու» կորուստին մասին, Թուրքիոյ կառավարութեան համար գործող լոբիական բազմաթիւ ընկերութիւններէն մէկուն կողմէ շարադրուած վերջին կեղծիքն է:*

*Փենսիլվենիոյ քոնկրէսականը նաեւ կեղծօրէն կը պնդէ, որ Հայոց Ցեղասպանութեան բանաձեւը «պիտի թշնամացնէ տարածաշրջանին մէջ մեր վերջին դաշնակիցներէն մէկը (Թուրքիան), որ ձեռք ձեռքի տուած՝ ամերիկեան զինուորներուն եւ մեր միւս դաշնակիցներուն հետ կ՛աշխատի ԻՊԻ («Իսլամական պետութեան») դէմ պայքարին մէջ»: Քոնկրէսական Շուսթըր պէտք է քարանձաւի մը մէջ թաքնուած ըլլար վերջին քանի մը տարիներուն, տեղեակ չըլլալու համար, որ «ՆԱԹՕի այս կարեւոր դաշնակիցը» կազմակերպած է ԻՊԻ հազարաւոր ահաբեկիչներու ներթափանցումը Սուրիա, անոնց մատակարարած է զէնք, զինամթերք ու ցուցաբերած է ռազմական աջակցութիւն: Քոնկրէսականը ծիծաղելիօրէն կը պնդէ, որ «այս (հայկական) բանաձեւին ընդունումը աղէտալի պիտի ըլլայ եւ պիտի վնասէ Միացեալ Նահանգներու շահերուն»: Եթէ Թուրքիան իրօք այդպիսի լաւ դաշնակից է Ամերիկայի համար, ապա ինչու՞ պէտք է ուզէ վնասել Ամերիկայի շահերուն: Արդեօք Հոլոքոսթի առնչութեամբ որեւէ դատապարտող բանաձեւի մը ընդունումը պիտի յանգեցնէ՞ ՆԱԹՕի մեր միւս դաշնակիցին՝ Գերմանիոյ կողմէ, ԱՄՆի շահերու վնասումին Եւրոպայի մէջ:*

*Քոնկրէսական Շուսթըր իր նամակը կ՛աւարտէ՝ 1.5 միլիոն հայերու զանգուածային սպանդը ընդամէնը «միջադէպ» անուանելով եւ կոչ ընելով իր գործընկերներուն՝ «կողմ չըլլալու պատմութեան վերամեկնաբանման ճակատամարտին», եւ՝ «անգամ մը եւս մտածելու՝ մինչեւ օրէնսդրութեան ստորագրումը, որ կրնայ զգալի վնաս հասցնել մեր յարաբերութիւններուն, տարածաշրջանին մէջ»: Զարմանալի չէ, որ «Թրքական հիմնարկ՝ յառաջդիմութեան համար» կոչուածը անմիջապէս հանդէս եկաւ յայտարարութեամբ մը՝ ողջունելով Հայոց Ցեղասպանութիւնը ժխտող քոնկրէսականին նամակը:*

*Փետրուար 27ին, թրքական «Սապահ» թերթը յայտնեց, որ Ներկայացուցիչներու տան երկու անդամներ՝ Նիւ Եորքէն դեմոկրատ Իւեթ Քլարք եւ հանրապետական Լի Զելտին, նոյնպէս յայտարարած են, որ դէմ են Հայոց Ցեղասպանութեան բանաձեւին: Ուշագրաւ է, որ Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբը «F» նիշը շնորհած է քոնկրէսական Շուսթըրին, եւ «C-»՝ քոնկրէսական Քլարքին: Քոնկրէսական Զելտին տակաւին գնահատական չէ ստացած Հայ Դատի յանձնախումբին կողմէ, քանի որ ասիկա անոր պաշտօնավարման առաջին շրջանն է:*

*Ամերիկահայերը մէկուկէս տարի ժամանակ ունին՝ մինչեւ յառաջիկայ քոնկրէսական ընտրութիւնները արդիւնաւէտ ծրագիր մը մշակելու համար, որպէսզի դաս մը տան Ցեղասպանութիւնը ժխտող այս երեք քոնկրէսականներուն: Եթէ անոնցմէ գոնէ մէկը պարտուի, ապա միւս անդամները երկար պիտի մտածեն նախքան Ցեղասպանութեան ժխտման անբարոյ խաղը խաղալը:*

*Զարմանալի չէ, որ երեքն ալ՝ Շուսթըրը, Քլարքը եւ Զելտինը, Քոնկրէսին մէջ Թուրքիոյ աջակցութեան խումբի 130 անդամներէն են: Բացի ատկէ, Շուսթըր նաեւ Քոնկրէսի մէջ Ատրպէյճանի աջակցութեան խումբի համանախագահն է: Այս երեք անսկզբունք քաղաքական գործիչներէն մէկը Քոնկրէսէն վռնտելէն ետք, հայ համայնքը պէտք է ռազմավարութիւն մշակէ հետապնդելու համար միւս բոլոր 130 անդամները այդ Թուրքիոյ աջակցութեան խումբին, որ 157 անդամ ունէր 2012 թուականին: Նման ճնշումի մը կիրառումը պիտի ստիպէ անոնց լքելու Թուրքիոյ աջակցութեան խումբը, իսկ ուրիշներուն՝ հրաժարելու անդամակցութեան մտադրութենէն, երբ հասկնան, թէ իրենք եւս դատապարտուած պիտի ըլլան պարտութեան:*

*Զերօ հանդուրժողականութիւն՝ Քոնկրէսին մէջ Ցեղասպանութիւնը ժխտողներուն նկատմամբ...*

*Թարգմանեց՝*
*ՌՈՒԶԱՆՆԱ ԱՒԱԳԵԱՆ*

## «ԿԻՆԸ ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ»

*Շարունակուածէջ 8-էն*



*Քասսեսեանը ներկայացրեց իւրաքանչիւր պատմուածքի վերլուծականը եւ Զոհրապի գրական ոճի եւ սոցիալական փիլիսոփայութեան մասին ամփոփ բացատրութիւն:*

*Ըստ բանախօսի, Գրիգոր Զոհրապը պատկանում էր մտաւորականների այն սերնդին, որ շատ կարեւոր դեր ունեցաւ հայկական մշակոյթի հարստացման մէջ, սերունդ, որ տասնամյակներ երկունք ապրելուց յետոյ ձեւաւորեց այնպիսի երեւոյթներ ինչպիսիք են, Օսմանեան կայսրութիւնում հայ քաղքենի դասը, մեծ թուով դպրոցների հիմնադրումը, բազմաթիւ թերթերի եւ պարբերականների հրատարակումը եւ եւրոպական համալսարաններ աւարտած հարիւրաւոր հայ ուսանողների ներկայութիւն:*

*Պարոն Քասսեսեանը ընդգծեց, որ հայոց ցեղասպանութեան հենց սկիզբից այդ սերնդի ֆիզիքական ոչնչացումը, բռնագաղթի ենթարկուած սփիւռքահայութեանը զրկեց իր մտաւորական առաջնորդներից եւ հայկական սփիւռքի մշակութային զարգացման առումով ստեղծեց մի այնպիսի բաց, որ շարունակւում է մինչեւ օրս:*

*«Այդ տեսանկիւնից, կարելի է արդարացիօրէն պնդել, որ Հայոց ցեղասպանութիւնը շարունակւում է մինչեւ օրս տալ իր չար պտուղները»,- եզրափակեց բանախօսը:*




**OFFICE SPACE FOR RENT IN PASADENA**

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**

1060 North Allen Ave
Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ**

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

## ԲԱՑ ՆԱՄԱԿ

*Շարունակուած էջ 15-էն*

*այլեւս քալել եւ ուժասպառ գետին ինկած է, Թուրք ոստիկանը սուլինահար սպաննած է զայն, մօրս աչքին առջեւ...: Ինչ կը վերաբերի ծնողքիս՝ անոնք, աշխատունակ ուրիշ երիտասարդ-երիտասարդուհիների հետ, ղրկուած են Դամասկոս, Թրքական բանակին համար ճամբայ կառուցելու: Երբ անգլիական բանակը գրաւած է Սուրիան, անոնք վերադարձած են իրենց ծննդավայրը, որ պատերազմի աւարտին դրուած էր Ֆրանսայի հովանաւորութեան տակ:*

*Ի դէպ է նաեւ ձեր ուշադրութեան յանձնել Թրքական ներկայ կառավարութեան բռնած դիրքը Հայոց Ցեղասպանութեան հանդէպ:*

*Նախ որպէս Թուրքիոյ վարչապետ, ապա՝ Նախագահ, պրն. Էրտողան անընդհատ կ՛երգէ նոյն հին ձանձրացուցիչ երգը: Ան կ՛առաջարկէ Հայաստանի կառավարութեան, որպէսզի խումբ մը պատմաբաններ ուսումնասիրեն հարցը եւ որոշեն թէ արդեօք հայկական ցեղասպանութիւն տեղի ունեցա՞ծ է: Թուրքիոյ Նախագահը քաջ գիտէ որ վաւերագրական անհերքելի փաստերով ապացուցուած պատմական իրողութիւն մը, վերստին հաստատուելու պէտք չունի: Էրտողան կը փորձէ բացուած վէրքին վրայ աղ ցանել...: Պահ մը մտածեցէք թէ հրեայ ժողովուրդն ի՞նչ պիտի զգար, եթէ Գերմանիան նման առաջարկ մը ներկայացուցած ըլլար Հրեաստանին Հոլոքոստի վերաբերեալ: Թուրքիայի Նախագահը լաւ գիտէ որ ցեղասպանութիւն գործելու նպատակով ամբողջ ժողովուրդի մը ծրագրուած զանգուածային բռնագաղթը, անմեղ մարդոց, կանանց եւ երեխաներու ոչնչացումը փամփուշտով, սրով ու սովով՝ կրնայ միայն մէկ անուն ունենալ... ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ:*

*Այս առնչութեամբ յիշեցնենք Թուրքիոյ Նախագահին որ Ա. Աշխարհամարտի սկիզբը աւելի քան 2,500,000 հայեր կ՛ ապրէին Օսմանեան Կայսրութեան մէջ: Պատերազմի աւարտին մնացած էին շուրջ 100.000 հայեր, որոնց մեծ մասը կ՛ապրէր Իսթանպուլ: Համաձայն Մեծն Բրիտանիոյ վարչապետ, Ուինսթըն Չըրչիլի, «Երեք կամ չորս հարիւր հազար մարդիկ, կանայք եւ երեխաներ փախան Ռուսական կառավարութեան ենթակայ շրջաններ, ուրիշներ՝ Պարսկաստան եւ Միջագետք»: Կ՛ենթադրուի որ 150000-200000 հայեր, մեծամասնութեամբ կանայք եւ երեխաներ, կամ բռնի իսլամացան կամ՝ որպէս գերի վաճառուեցան: Հարցումս պրն. Էրտողանին հետեւեալն է.*

*-Ի՞նչ պատահեցաւ մնացածներուն, անոնց կալուածներուն, անոնց շարժուն հարստութեան, դրամատուներու մէջ պահ դրուած անոնց դրամին, անոնց եկեղեցիներուն, անոնց մշակութային հաստատութիւններուն, անոնց կրթական օճախներուն եւ այլն...:*

*Մի քանի խօսք ալ Էրտողանի վերջին արարքի մասին, որուն նպատակն է ոչ միայն խոչընդոտ հանդիսանալ հայոց ցեղասպանութեան հարիւրամեակի ձեռնարկներուն՝ այլ նաեւ թշնամութիւն սերմանել հայ եւ Թուրք ժողովուրդներու միջեւ: Թուրքիոյ Նախագահը քաջատեղեակ է որ հայ ժողովուրդն ամէն տարի, ի սփիւռս աշխարհի, Ապրիլ 24ին կը նշէ Հայոց Ցեղասպանութեան տարեդարը, իսկ Թուրքիան՝ Մարտի 18ին՝ «Տարտանելի Օր»ը: Եւ ահա յանկարծ, 2015ին, հայոց ցեղասպանութեան հարիւրամեակին, Էրտողան կ՛որոշէ «Տարտանելի Օր»ը նշել Ապրիլ 24ին...: Աւելին՝ ան բոլոր պետութիւններու ղեկավարներուն հետ՝ Թուրքիա կը հրաւիրէ նաեւ Հայաստանի Նախագահը մասնակցելու «Տարտանելի Օր»ուան հանդիսութիւններուն...:*

*Նման անփափկանկատ եւ անարգական վերաբերմունք չէր սպասուեր նոյնիսկ Էրտողանէն...: Անոր առած անվայել քայլը հիմնական մէկ նպատակ կը հետապնդէ՝ խանգարել հայոց ցեղասպանութեան հարիւրամեակին նուիրուած գլխաւոր հանդիսութիւնը, որ տեղի պիտի ունենայ Երեւանի «Ծիծեռնակաբերդ» Յուշահամալիրին մէջ, 24 Ապրիլ 2015ին եւ որուն մասնակցելու հրաւէր ղրկուած է բոլոր երկիրներու ղեկավարներուն:*

*Կը սպասուի որ դուք, միւս պետութիւններու ղեկավարներուն հետ, դատապարտէք Թուրքիոյ Նախագահը իր անընդունելի վերաբերմունքին համար:*

*Այս Նամակին մէջ մէջբերուած յայտարարութիւններու, վկայութիւններու եւ փաստաթղթերու հեղինակները, ինչպէս նշուեցաւ արդէն, բոլորն ալ սկզբունքի տէր յարգարժան անձեր են, որոնք մերժած են թաղել ճշմարտութիւնը, համոզուած ըլլալով, առանց դոյզն կասկածի, որ Ա. Համաշխարհային Պատերազմի ընթացքին Օսմանեան Երիտթրքական կառավարութիւնը գործադրեց հայերը բնաջնջելու իր կողմէ նախապատրաստուած ծրագիրը:*

*Արդ, եթէ նախորդ պարբերութեան մէջ նշուած անժխտելի եզրակացութիւնը դուք ալ կը գտնէք ճիշդ, ձեր պարտականութիւնն է, որպէս երեք հզօր պետութիւններու ղեկավարներ, որոնք աշխարհին կը ներկայանան իբրեւ ճշմարտութեան, արդարութեան եւ ժողովրդավարութեան պաշտպան քաղաքական գործիչներ, ճանչնալ Հայոց Ցեղասպանութիւնը:*

*Յարգանքներով՝*
*Ասատուր Կիւզելեան*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ՅՈՎԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով մեր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնենք այրիին եւ ընտանեկան բոլոր պարագաներուն: Մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Լուսինէ Թօփալեաններուն:*

*«Մասիս»*

SYRIAN ARMENIAN RELIEF FUND
Save
Support
Sustain
Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948
www.syrianarmenianrelieffund.org

## ՄԱՍՈՒՆՔ

*Շարունակուած էջ 14-էն*

*իրենց ընտանիքներու տեղահանութեամբ ու ողջակիզումով: Ցուրտէն, անօթութենէն, հիւանդութիւններէ չմեռնողները կ՛ենթարկուէին անխնայ զանգուածային սպանութիւններու: Կ՛ըսուի թէ հազարներ սպանուած են վերջերս հոլովուող Կալիփոլիի (Չանաքքալէ) մէջ:*

*Ահա՛ այսպիսի ճակատագիրէ փախուստ կու տային Արամ Եսայեան եւ ընկերները յանձնուելով անգլիական բանակին: Ի վերջոյ ան կը հաստատուի Աղեքսանդրիա եւ կ՛աշխատի Գրիգոր եւ Կարապետ Մելգոնեան եղբայրներուն մօտ որպէս քարտուղար: Գործի բերումով երբեմն կը գտնուի նաեւ Կիպրոս: Դուստրը, որու անանուն մնալու փափաքը կը յարգենք, ծնած է Կիպրոս Մելգոնեանի հողին վրայ:*

*100ամեայ տարելիցը կը նշենք այս տարի Հայոց Ցեղասպանութեան: Յարգենք մեր նահատակները հայ մնալով եւ արդարութիւն պահանջելով անոնց յիշատակին: Փառք տանք հրաշքով վերապրած մեր ծնողներուն եւ մեծ ծնողներուն համար: Ազգային բարերարութեան պատուանդանին վրայ միշտ բարձր պահենք հեռատես Մելգոնեան եղբայրները, որոնք, թէեւ անուս, գիտցան թէ դպրոցով, հայ լեզուի ու մշակոյթի պահպանումով կ՛երաշխաւորուի ազգին գոյատեւումը:*

*Այս գրութեան առիթ տուող, խորհրդածութիւններու մղող Աղա Կարապետ Մելգոնեանին գուագանով անոնցմէ մնացած հոգեկան ժառանգութեան կ՛աւելնայ այսօր նիւթեղէնն ալ:*

VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles
Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆԻն



Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* $50,00 * $100,00 (first class) for USA
$ 125,00 (Air Mail) for Canada.
$ 250,00 (Air Mail) Overseas.
Name: -----------------------------------------
Address: ----------------------------------------
City: --------- State:--------- Zip Code:------
Country: -------------
Tel :----------------------- Email: -------------------------

«ՔԱՋ ՆԱԶԱՐ» ՌԱԴԻՈ ԵԹԵՐ ՏՕ
Ամէն Կիրակի
Երեկոյեան ժամը 10:00–ից 12:30
Կլէնտէյլի 380-րդ կայանից

## The Armenian Genocide

# What the World Witnessed A Century Ago

A Presentation of **AGBU Asbeds**




## On Exhibit
### Front Page Coverage in the World Press

## On Display
### April 8-10 | 2015
11am-10pm
**Free admission**

**April 8** | 7:30pm
### Opening Night Reception
Welcoming remarks and speeches by various VIP's and dignitaries in attendance, exhibit tour and discussion.
**Keynote Speaker**
**Dr. Hayk Demoyan**
Director of the Armenian Genocide Museum-Institute
Yerevan, Armenia

**April 9** | 7:30pm
### Economics of the Armenian Genocide
Lecture: "Economics of the Armenian Genocide and its consequences."
**Speaker**
**Dr. Ugur Ümit Üngör**
Associate Professor of History
Utrecht University
Institute for War, Holocaust, and Genocide Studies, Amsterdam
The Netherlands
**Moderator**
**Kurken Berksanlar**
AGBU Asbeds

**April 10** | 7:30pm
### Forcefully Islamized Armenians
Panel Discussion: "Islamized Armenians, who are they, how many are there, and how should, Armenia, the Armenian community at large and the Armenian Apostolic Church accept them?"
**Panelists**
**Abp. Hovnan Derderian**
Primate of the Western Diocese
**Raffi Bedrosyan**
Writer, activist, Toronto, Canada
**Moderator**
**Kurken Berksanlar**
AGBU Asbeds

Armenian Genocide Museum-Institute

1915–2015
Centennial of the Armenian Genocide

## Skirball Cultural Center
2701 North Sepulveda Blvd Los Angeles CA 90049

For information contact
**AGBU Asbeds**
**626-794-7942** | **asbeds@agbuca.org**

ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION · 1906

AGBU ASBEDS